ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

10 (79)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (79), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ազլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (79), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մարտիրոսյան
Համացանցը Հայաստանում. 2016 թվականի ամփոփում ……..……..... 5

Դիանա Գալստյան, Մարիամ Խալաթյան
Արժեքները միջմշակութային համեմատական հետազոտությունների
համատեքստում 8

Գագիկ Հարությունյան
«Երրորդ ռեյխի» տեղեկատվական քաղաքականության
առանձնահատկությունները 15

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
Արցախի Հանրապետության
արտաքին քաղաքականությունը. 2016թ. նոյեմբեր 22

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. նոյեմբեր 27

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. նոյեմբեր 36

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. նոյեմբեր …..... 42

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. 2016թ. նոյեմբեր 48

Հուշագիր հեղինակին 57

Տեղեկատվական անվտանգություն

ՀԱՄԱՑԱՆՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Սամվել Մարտիրոսյան[*]

Համացանցը, հաղորդակցության ոլորտը Հայաստանում 2016թ. ընթացքում շարունակել են կայուն զարգանալ: Աճ է նկատվել ինչպես ինտերնետից օգտվողների թվի, այնպես էլ՝ սոցցանցերի օգտագործման տեսանկյունից:

Ինտերնետ և բջջային կապի հասանելիության տեսանկյունից Հայաստանում դիտվում է դանդաղ, բայց կայուն աճ:

Բջջային կապի բաժանորդների թվաքանակը Հայաստանում 2016թ. երրորդ եռամսյակում հասել է 3 486 480-ի, ինչը նախորդ եռամսյակի համեմատ 52 084 բաժանորդով ավելի է (2015թ. այս ցուցանիշը 3 424 236 էր[1]):

Բաժանորդներն, ըստ օպերատորների, բաշխվում են հետևյալ կերպ. փակագծերում տրված է աճը մեկ եռամսյակի ընթացքում.

Vivacell - 2 112 606 (+28 444)

Beeline - 890 507 (+26 945)

Ucom - 483 367 (-3 305):

Ինչ վերաբերում է ինտերնետ կապի հասանելիությանը, ապա այստեղ նույնպես դիտվում է աճ բոլոր ցուցանիշներով:

2016թ. երրորդ եռամսյակի տվյալներով[2].

- լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը հասել է 265 480-ի (+4 835)
- շարժական լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը՝ 247 140-ի (+15 442)

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] Սամվել Մարտիրոսյան, Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտը 2014թ. տվյալներով, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13460&sphrase_id=57070

[2] Տվյալները վերցված են ինտերնետ պրովայդերների պաշտոնական հաշվետվություններից:

- բջջային հեռախոսներով ինտերնետ կապից օգտվող բաժանորդների թիվը՝ 1 891 078-ի (+ 229 132):

Ըստ հիմնական շուկայում ներկայացված պրովայդերների՝ վիճակագրությունը հետևյալն է.

Armentel -

- բաժանորդագրությունները - 142 607
- շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները - 50 113 (լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների),
- համացանցին կպած բջջային հեռախոսների թիվը - 365 042 (տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ, հեռախոսի միջոցով):

Vivacell -

- շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները - 72 368
- համացանցին կպած բջջային հեռախոսների թիվը - 1 259 602:

Ucom

Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները - 77 954

- շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները - 124 659
- համացանցին կպած բջջային հեռախոսների թիվը - 266 434:

Rostelecom

- Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները - 35 819:

Interactive

- լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները - 5 212:

Arpinet

- լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները - 2 675:

Web

- լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները - 1 213:

Գերիշխող դեր ունեցող երկու սոցիալական ցանցերի տեսանկյունից նույնպես նկատվում են լուրջ փոփոխություններ: Այսպես, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցը դառնում է Հայաստանում առաջատարը: Մեկ տարվա կտրվածքով ակտիվ օգտատերերի աճը կազմել է 200 հազար կամ 20%[3]: 2016թ. դեկտեմբերի տվյալներով, որոնք տրամադրվում են տվյալ սոցցանցի գովազդային հարթակի կողմից, ակտիվ օգտատերերի թիվը Հայաստանից կազմում է մոտ մեկ միլիոն: Բացի դրանից, մոտ 35 հազար ակտիվ օգտատեր կա Արցախից:

Մյուս կողմից՝ ռուսաստանյան «Օդնոկլասնիկի» սոցիալական ցանցը զիջում է առաջատար դիրքերը Հայաստանում (տե՛ս *Նկար 1*):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հեռահաղորդակցության ոլորտում Հայաստանում շարունակում է դիտվել ոչ շատ ակտիվ, սակայն դինամիկ աճ:

Նկար 1

Odnoklassniki.ru այցելությունները Հայաստանից 2015-2016թթ., ըստ Liveinternet.ru տվյալների

[3] Սամվել Մարտիրոսյան, Սոցիալական ցանցերը Հայաստանում (2015թ. տվյալները), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13686&sphrase_id=57070

ԱՐԺԵՔՆԵՐԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դիանա Գալստյան, Մարիամ Խալաթյան***

Մշակութային միջավայրը ձևավորում է անձին որպես հասարակության անդամ, որպես յուրահատուկ արժեքների կրող: Արժեքները ձևավորում են որոշակի սահմաններ ու մարդկային վարքի նորմեր և իրականացնում են նպատակների և դրդապատճառների ձևավորման գործառույթներ, պայմանավորում վարքի որոշակի տիպի նախընտրելիությունը՝ ապահովելով իրականության նկատմամբ ընտրական վերաբերմունք [1]: Արժեքները հասարակության կողմից ընդունված ցանկալիի մասին պատկերացումներն են:

Տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներով են հանդես գալիս արժեքները սահմանելիս: Օրինակ, արժեքների էությունը դրանց նշանակալիությունն է, այլ ոչ թե դրանց փաստացիությունը (Մ.Ռոկիչ, Շ.Շվարց): Հեղինակների մի խումբ (Կ.Կլակխոն, Ջ.Ռոտեր) արժեքները դիտարկում են որպես ընտրություն՝ սահմանելով դրանք որպես գիտակցված և ոչ գիտակցված, անձին կամ խմբին բնորոշ ցանկալիի մասին պատկերացումներ, որոնք պայմանավորում են նպատակների ընտրությունը՝ հաշվի առնելով միջոցները և գործունեության ձևերը: Դ.Լեոնտևի տեսության համաձայն՝ արժեքները սահմանվում են որպես ֆենոմեն, որը բնութագրվում է կոնկրետ գործոններով, մասնավորապես՝ բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, արժեքները համակարգված են, մարդկային արժեքները սերում են մշակույթից, արժեքներն իրենց ազդեցությունն են ունենում կյանքի բոլոր ոլորտներում [2]:

Ընդունված է տարբերակել արժեքների հետևյալ երկու տիպերը.

- *Սոցիալական խմբերին բնորոշ արժեքները* հասարակության մեջ անհատի համար նշանակալի նյութական, սոցիալ-քաղաքական, հոգևոր և այլ արժեքներն են: Սոցիալական խմբերին բնորոշ արժեքների ուսումնասիրությունը կիրառելի է այն ժամանակ, երբ այդ արժեքները բնու-

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
** «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

թագրում են հասարակության սոցիալական մշակույթը և ընդհանուր են տվյալ մշակույթը կազմող անհատների համար:

- *Անձնային-անհատական արժեքները* դրսևորվում են անձի արժեքային կողմնորոշումներում, վերջիններս սերում են հասարակական, ազգային, մշակութային արժեքներից: Յուրաքանչյուր ժամանակաշրջան բնութագրվում է արժեքների բնորոշ հավաքակազմով, որն ապահովում է հանրության կենսագործունեության կարգը:

Արժեքներն անհատական և սոցիալական մակարդակներում տեղի ունեցող փոփոխություններին հետևելու համար լավ ցուցիչներ են, որոնք նպաստում են այդ գործընթացներն ավելի լավ հասկանալուն:

Արժեքների ուսումնասիրման տեսություններ. Արժեքները մեկնաբանող տարբեր միջդիսցիպլինար տեսությունների շարքում կարելի է անդրադառնալ հիմնական տեսություններին, որոնք տարածված են սոցիալ-հոգեբանական քննարկման դաշտում:

Արժեքները Մ.Ռոկիչը սահմանում է որպես կայուն համոզմունքների տարատեսակ, որի համաձայն՝ գոյության այս կամ այն ձևն ավելի նախապատվելի է, քան մյուսը: Մ.Ռոկիչն առանձնացնում է բազային (ունիվերսալ, տերմինալային) և գործիքային (անհատական) արժեքներ: Բազային արժեքները մեր համոզմունքներն ու պատկերացումներն են վերջնական նպատակի մասին, ինչին ձգտում ենք, օրինակ՝ երջանկություն, իմաստություն: Գործիքային արժեքները միջնորդավորված բազային արժեքների հասնելու ճանապարհին ցանկալի վարքի մասին պատկերացումներն են: Մ.Ռոկիչի տեսության համաձայն՝ հնարավոր է առանձնացնել անձի կողմնորոշումը և սահմանել ու հստակեցնել նրա հարաբերությունները շրջապատող աշխարհի, հասարակության այլ անդամների ու ինքն իր հանդեպ [3]:

Շ.Շվարցը գտնում է, որ արժեքների հիմքում ընկած են նպատակները: Այդ պատճառով նա արժեքները խմբավորել է՝ ելնելով դրանց հիմքում ընկած նպատակների տեսանկյունից: Շ.Շվարցը, հիմնվելով մշակութային արժեքների չափողական մոտեցման վրա, 1990-ականներին ուսումնասիրություններ է կատարել 54 երկրներում՝ արդյունքում հետազոտելով 44.000 մարդու, և դուրս է բերել 10 բազային արժեք, որոնք այս կամ այն չափով արտահայտված են բոլոր մշակույթներում: Շվարցի առանձնացրած տասը բազային արժեքներն են՝ *կոմֆորմու-*

թյուն, ավանդականություն, բարություն, ունիվերսալիզմ, ինքնուրույնություն, ստիմուլյացիա, գեդոնիզմ, ձեռքբերում, իշխանություն, անվտանգություն [4]:

Հաջորդ տեսության հեղինակը Ռ.Ինգլհարթն է, որը միջմշակութային հետազոտությունների իրականացման արդյունքում փաստում է, որ հասարակությունները կարելի է համեմատել ըստ հետևյալ երկու չափումների (այս չափումները դուրս են բերվել «Համաշխարհային արժեքների հետազոտության» (*World Values Survey*) արդյունքում).

- ավանդական և աշխարհիկ-ռացիոնալ արժեքներ. ավանդական արժեքների շարքին են դասվում կրոնը, ընտանիքը, բացարձակ ստանդարտները, սոցիալական հարմարվողականությունը և այլն: Աշխարհիկ-ռացիոնալ արժեքներն են ռացիոնալ վարքը, հաջողության ձգտումը, կրոնի ցածր դերը և այլն;
- գոյապահպանման և ինքնարտահայտման արժեքներ. գոյապահպանման արժեքներն ընդգրկում են տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը, նյութական արժեքները, այլախոհության հանդեպ անհանդուրժողականությունը, մարդու իրավունքների և ազատության ցածր մակարդակը և այլն, իսկ ինքնարտահայտման արժեքները՝ անձի, ազատության, մարդու իրավունքների, նյութական բարեկեցության, հաջողության, տնտեսական ապահովվածության, գենդերային հավասարության բարձր մակարդակը և այլն[1]:

Ըստ Ինգլհարթի՝ տնտեսապես չզարգացած հասարակություններում նախապատվություն են տալիս գոյապահպանման ու ապահովության արժեքներին (տնտեսական աճ, կայուն տնտեսություն, կարգուկանոնի հաստատում և այլն): Իսկ աշխարհիկ-ռացիոնալ և ինքնարտահայտման արժեքները համարվում են հետմատերիալիստական[2], այսինքն՝ դրանք բնորոշ են նյութական արժեքների հրատապությունը հաղթահարած հասարակություններին:

[1] *Ronald Inglehart; Chris Welzel,* "The WVS Cultural Map of the World" https://web.archive.org/web/20131019112321/http://www.worldvaluessurvey.org/wvs/articles/folder_published/article_base_54

[2] Հետմատերիալիզմ (*Post-materialism)* տերմինն առաջարկել է Ռ.Ինգլհարթը ժամանակակից հասարակության զարգացման առանձնահատկությունները բնորոշելու համար: Իր «Խաղաղ հեղաշրջում» (1977թ.) աշխատությունում հիմք ընդունելով իրականացված հարցումների արդյունքները՝ նա եզրակացրել է, որ արևմտյան դեմոկրատական երկրներում ապահովված երիտասարդներին առավել քիչ են հետաքրքրում զուտ նյութական բնույթ կրող խնդիրները՝ եկամուտ, անվտանգություն, ավելի շատ հետաքրքրում են քաղաքացիական ազատության, էկոլոգիական խնդիրները: Այսինքն՝ տեղի է ունենում տեղաշարժ մատերիալիստական արժեքներից (երբ կարևորվում է առաջին հերթին տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը) դեպի հետմատերիալիստական արժեքներ (երբ առաջնահերթ են դառնում ինքնարտահայտումը և կյանքի որակը):

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ արժեքները դիտարկվում են որպես հիմնարար բարոյական և էթիկական նորմեր, որոնք միևնույն ժամանակ իրականացնում են կարգավորող և կանխատեսող ֆունկցիա և ապահովում են սոցիալական համակարգի ամբողջականությունը: Արժեքները, միմյանց հետ փոխազդեցության մեջ մտնելով, ձևավորում են մի համակարգ, որը հասարակության կազմավորման կարևորագույն տարրն է, և հենց արժեքային տարբերություններն են, որ մշակույթների ուսումնասիրման և համեմատական եզրեր տանելու գործում մեծ դեր ունեն [5]:

Միջմշակութային համեմատական հետազոտություններ. Միջմշակութային համեմատական հետազոտությունները յուրաքանչյուր հասարակությանը հնարավորություն են ընձեռում կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներում առանձնացնել սեփական յուրահատկությունները, տեսնել ընդհանրություններն ու տարբերություններն այլ հասարակությունների հետ համեմատության դիտանկյունից: Վերջին տարիներին նշանակալիորեն ավելացել են ինչպես անհատական, այնպես էլ մշակութային մակարդակում արժեքային տարբերություններին ուղղված հետազոտությունները: Նման մի քանի ուսումնասիրությունների, դրանց մեթոդաբանական որոշ հարցերի կանդրադառնանք ստորև:

Համեմատական հետազոտությունների դասակարգում: Համեմատական հետազոտությունները կարելի է տիպաբանել հետևյալ մի քանի չափորոշիչներին համապատասխան.

- *ըստ համեմատության օբյեկտի,* որն իր հերթին ևս բաժանվում է (միջերկրային հետազոտություններ, որտեղ հետազոտման օբյեկտն են առանձին երկրները, միջմշակութային հետազոտություններ, որտեղ հետազոտության օբյեկտ են հանդիսանում տարբեր մշակույթները և այլն);
- *ըստ ընդգրկման՝ համեմատվող օբյեկտների (երկրների) քանակի և ժամանակային միջակայքի* (հետազոտություններ, որտեղ ընդգրկված են փոքր թվով երկրներ, տարածաշրջանային հետազոտություններ (Եվրոպա, Ասիա, ԱՊՀ), Միջազգային հետազոտություններ, օրինակ՝ *Gallup World Poll, WVS, ISSP);*
- *ըստ թեմատիկ ուղղվածության* (օրինակ, ակադեմիական հետազոտություններ, որոնք ուղղված են կարևոր սոցիալական գործընթացների կամ արժեքների ուսումնասիրմանը, հասարակական կարծիքի հարցումներ և այլն) [6]:

Տեսաբանները համեմատական հետազոտությունների սկիզբը համարում են Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիները: Այդօրինակ առաջին հետազոտությունն իրականացվել է 1948-1949թթ., որի նպատակն էր ուսումնասիրել պետությունների և ժողովուրդների պատկերացումները պատերազմի մասնակից դաշնակից երկրների և հակառակորդ երկրների միջև: Միջմշակութային հետազոտությունների զարգացման մեջ կարևոր էր 1962թ. իրականացված *«Հասարակության դիրքորոշումները միացյալ Եվրոպայի նկատմամբ»* ուսումնասիրությունը, որը հետագայում սկիզբ դրեց այժմ այդ ոլորտում հայտնի նախագծի՝ «Եվրաբարոմետրի» համար, որի առաջին ալիքն իրականացվել է 1970թ.: Հենց 70-ական թվականներից սկսվեց համեմատական հետազոտությունների ինստիտուցիոնալացումը, հիմնվեցին տվյալների հավաքագրումը կոորդինացնող կենտրոններ:

«Եվրաբարոմետրը» (Eurobarometer) նախաձեռնվել է Եվրամիության կողմից, հիմնական նպատակն էր եվրոպական ինտեգրացիայի, եվրոպական քաղաքականության նկատմամբ բնակչության դիրքորոշումների բացահայտումը: Սկզբնական շրջանում հետազոտության մեջ ներառված էին եվրոպական մի քանի երկրներ, սակայն աստիճանաբար դրա աշխարհագրությունը մեծացավ, և ներկայումս դրանում ընդգրկված են ԵՄ բոլոր երկրները, 2004թ. սկսած՝ Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը: Հետազոտության մեթոդաբանությունը ներկայացնում է տարբեր երկրների բնակչության (15 տարեկան և բարձր) հարցումներ տնայցերի միջոցով: Ընտրանքային համախմբությունը կազմում է մոտ 1000 հարցվող: Տարիների ընթացքում մեթոդաբանությունը փոփոխվել է՝ քվոտային ընտրանքին[3] փոխարինել է խիստ պատահական ընտրանքը, որի արդյունքում գլխավոր համախմբության յուրաքանչյուր անդամ ընտրանքի մեջ ներգրավվելու հավասար պատահական հավանականություն ունի:

Սոցիալական հետազոտությունների միջազգային ծրագիր *(International Social Survey Program -ISSP). Սոցիալական հետազոտությունների միջազգային* ծրագիրը *նախաձեռնվել է Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ, Գերմանիայի և Ավստրալիայի հետազոտական ինստիտուտների կողմից 1985-ից: Ընդհանուր*

[3] Քվոտային ընտրանքը ձևավորում է մի մոդել, որը վերարտադրում է գլխավոր համախմբության (տվյալ դեպքում՝ ողջ բնակչության) կառուցվածքը քվոտաների միջոցով (սեռ, տարիք, կրթություն և այլն); *Г.В. Осипов,* “Рабочая книга социолога”, М., Наука, 1979, с. 175.

առմամբ, ներառված է 53 երկիր: ISSP-ն ներկայացնում է ամենամյա հետազոտություններ սոցիալական կարևոր նշանակություն ունեցող թեմաների վերաբերյալ: Ընտրվում են թիրախային թեմաներ (կրոն, ընտանիք, կառավարության դեր, սոցիալական անհավասարություն), որոնց վերաբերյալ կազմվում է ընդհանուր հարցաշար: Ընտրանքային համախմբությունն ամեն երկրի համար 1000 հարցվող է: Թեմաները պարբերաբար կրկնվում են:

Համաշխարհային արժեքների հետազոտություն (*World Value Survey-WVS).* Նախագծի առաջին ալիքն իրականացվել է 1981թ.[4], Եվրոպայի արժեքների հետազոտության նախագծի շրջանակներում, ընդգրկելով Արևմտյան Եվրոպայի 9 երկիր: Հետագայում հետազոտությունն ընդլայնեց աշխարհագրությունը, և այժմ *WVS*-ն արժեքների ուսումնասիրության ամենալայնածավալ հետազոտական ծրագիրն է: Նախագծում ներառված են ավելի քան 100 երկրների (մոտ 450 000 հարցվողների) մասին տվյալներ: Հարցումներն ամեն երկրում իրականացնում են պատասխանատու կազմակերպությունների կողմից ստանդարտացված հարցաթերթով, որն ընդգրկում է տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքին առնչվող հարցեր: Հարցումներն իրականացվում են ազգային ներկայացուցչական ընտրանքի միջոցով, նվազագույնը 1000 չափահաս հարցվողների շրջանում:

Ամփոփելով նշենք, որ արժեքների միջազգային համեմատական ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս դուրս բերել հասարակության կոնկրետ դիմագիծը, արժեքների և սոցիալական ֆենոմենների միջև կապերը: Պետք է ուշադրություն դարձնել նմանօրինակ հետազոտությունների հայտնի սահմանափակումներին, այդ թվում՝ խիստ ստանդարտացված գործիքը, վերջինիս միանշանակ կիրառումը, որը յուրաքանչյուր երկրում տեղայնացնելու խնդիր կարող է առաջացնել, պարզապես կարծիքների փաստարկումը՝ առանց խորքային, բովանդակային պատճառների դուրսբերման և այլն: Այնուամենայնիվ, այսպիսի հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն իրենց հարուստ ինֆորմատիվ բնույթի շնորհիվ, որը թույլ է տալիս դուրս բերել միջմշակութային տարբերակումներն ու յուրահատկությունները: Դրանց պարբերական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հստակ պատկերացնել այդ փոփոխությունների հե-

[4] Ընդհանուր առմամբ անց է կացվել 6 հետազոտական ալիք. 1981-1984թթ., 1990-1994թթ., 1995-1998թթ., 1999-2004թթ., 2005-2009թթ., 2010-2014թթ.: 7-րդ ալիքը նախատեսված է 2017թ.:

տևանքները, որոշակի կանխատեսումներ անել՝ ելնելով արժեքային պատկերի փոփոխություններից և համապատասխան քաղաքականություն մշակել: Դրանով է պայմանավորված միջմշակութային հետազոտությունների և արժեքների միջազգային համեմատական ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրությունը:

Աղբյուրներ և գրականություն

1. *Հակոբյան Լ.Ս,* Հայաստանը «Արժեքների համաշխարհային հետազոտության» արդյունքներում», «Նորավանք» ԳՀԿ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 6, 2014:
2. *Леонтьев Д.А.,* От социальных ценностей к личностным: социогенез и феноменология ценностной регуляции деятельности (статья первая) // Вестник Моск. ун-та. Сер. 14. Психология, 1996, N 4.
3. *Rokeach M.,* The Nature of Human Values, New York, The Free. Press, 1973.
4. *Schwartz S.H,* Value orientations: Measurement, antecedents and consequences across nations/ In: R. Jowell, C. Roberts et al (Eds.). Measuring attitudes crossnationally: lessons from the ESS. London: Sage, 2006.
5. Елишев С.О., Изучение понятий «ценность», «ценностные ориентации» в междисциплинарном аспекте Ценности и смыслы, № 2 (11), 2011.
6. *Андреенкова А.В.*, Межстрановые сравнительные исследования в социальных науках: методология, этапы развития, современное состояние, Мир России. Социология. Этнология, Выпуск № 3, том 20, 2011.

«ԵՐՐՈՐԴ ՌԵՅԽԻ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խզում իրականության և քարոզչության բովանդակության միջև

Գագիկ Հարությունյան[*]

Հատկանշական է, որ Գերմանիան գրեթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918թ., ագիտացիոն-պրոպագանդիստական գործողություններ չէր վարում, քանի որ դա, ըստ գերմանացիների պատկերացումների, հակասում էր պատերազմ վարելու օրենքներին: Հակամարտությունների ընթացքում նման մոտեցման անհեռանկարայնությունն առավել սուր գիտակցել էր Երրորդ ռեյխի ապագա առաջնորդ Ադոլֆ Հիտլերը, որն իր 1925-1926թթ. հրապարակած *«Mein Kampf»* («Իմ պայքարը») ծրագրային գրքում իրեն բնորոշ անառարկելի ոճով գրել էր, որ եթե «Անգլիայում պրոպագանդան դարձել էր առաջնակարգ զենք, ապա մեզ մոտ այն գործազուրկ քաղաքական գործիչներին նետված ողորմություն էր»:

Հիտլերը և նրա համախոհներն ավելի քան կարևորեցին տեղեկատվական գործոնը: Այն առաջնային տեղ գրավեց նրանց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունում: Նրանց հիմնած Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցությունում արդեն 1930թ. ստեղծվում է ագիտացիոն-պրոպագանդիստական ոլորտի պատասխանատուի (այսպես կոչված ռեյխսլայթերի) պաշտոն, որի ղեկավար է նշանակվում Յոզեֆ Գեբելսը: Նկատենք, որ 1933-ին սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում գտնվող Գերմանիայում Հիտլերի իշխանության գալը մեծ չափով պայմանավորված էր նաև նրա պրոպագանդիստական և ագիտատորական ունակություններով: Նա կարողանում էր գտնել կոնկրետ լսարանի համար հրատապ թեմաները և մեծ եռանդով ներկայացնում էր ընկալման համար պարզ «լուծումներ»: Այդ համատեքստում զարմանալի չէ, որ 1936թ. Նյուրնբերգում

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

կայացած նացիոնալ-սոցիալիստների համագումարի դահլիճում փակցված էր մի մեծ պաստառ, որի վրա գրված էր. *«Պրոպագանդան օգնեց մեզ գալ իշխանության: Պրոպագանդան մեզ կօգնի պահել իշխանությունը: Պրոպագանդան մեզ կօգնի նվաճել ողջ աշխարհը»:* Նյուրնբերգի համագումարում, կարելի է ասել, վերջնականորեն ձևավորվեց նացիստական գաղափարախոսությունը, և այդ առումով բնորոշ էր մասնակիցներից մեկի ելույթը, ըստ որի՝ գոյություն պետք է ունենար ընդամենը մեկ հասկացություն՝ «բացարձակ գերմանացին, որը միշտ և ամենուր մնում է գերմանացի և միայն գերմանացի, ինչն էլ իրեն դարձնում է նացիստ»: Հատկանշական է, որ նույն քաղաքում ընդամենը 9 տարի հետո կայացավ Երրորդ ռեյխի ղեկավարության միջազգային դատավարությունը:

Վերը հիշատակված Յոզեֆ Գեբելսը նացիստների իշխանության գալուց հետո ստանում է Ժողովրդական լուսավորության և պրոպագանդայի նախարարի *(ռեյխսմինիստրի)* պաշտոնը: Սահմանելով տոտալ վերահսկողություն բոլոր միջոցների վրա՝ սկզբնական շրջանում այդ կառույցին հաջողվում է մոբիլիզացնել Գերմանիայի բնակչությանը նացիոնալ-սոցիալիզմի գաղափարների շուրջ: Դա պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունը բարդույթներ էր առաջացրել գերմանական հանրությունում, քանի որ այդ երկիրը (համաձայն 1919թ. կնքված Վերսալյան պայմանագրի) զրկվել էր իր տարածքների մի զգալի մասից՝ Էլզաս-Լոթարինգիան վերադարձվել էր Ֆրանսիային, Լեհաստանին էր տրվել Արևմտյան Պրուսիայի մի մասը և այլն): Այդ համատեքստում հիտլերյան կոչերը գերմանացիների արտակարգ ազգ լինելու և ռազմական ռևանշի վերաբերյալ դրական էին ընկալվում հասարակությունում: Այս ամենի համատեքստում պատահական չէ, որ նացիստները 1933թ. վերջին իշխանությունը ոչ թե հեղափոխության, այլ պառլամենտական ընտրությունների արդյունքում: Ինչպես տեսնում ենք, ժողովրդավարական ինստիտուտների առկայությունը, համապատասխան տեղեկատվական-հոգեբանական մթնոլորտ ստեղծելու դեպքում, չի կարող երաշխավորել այս կամ այն ծայրահեղական ուժի իշխանության գալը:

Կարևոր հանգամանք էր նաև այն, որ Հիտլերի իշխանության գալը հանգեցրեց տնտեսական վերելքի տնտեսապես կազմալուծված երկրում: Այդ հա-

մատեքստում ուշադրության արժանի են սոցիալական և գաղափարախոսական ուղղվածության կոչերը՝ «Գերմանիան առանց կապիտալիստների և կոմունիստների»:

Այլ խոսքով՝ պետք է ընդունել, որ նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության տոտալ պրոպագանդան ինչ-որ չափով ադեկվատ էր հանրությունում իշխող տրամադրություններին և դրդում էր նրանց հետևել հիտլերյան գաղափարախոսության սկզբունքներին և դրույթներին: Այդ ամենին նպաստում էին Հիտլերի կրքոտ ելույթները զանազան հանրահավաքներում և հանդիպումներում: Իր ճառերը նա պատրաստում էր օրերով՝ մշակելով շեշտադրումները, բաց չթողնելով ոչ մի մանրուք, և դրանք, մասնագետների կարծիքով, դասվում են հռետորական արվեստի լավագույն օրինակների շարքին: Համաձայն պահպանված վկայությունների, ֆյուրերի ելույթները հիպնոսող հատկություն ունեին: Կարևոր նշանակություն էին ձեռք բերել արարողական բնույթ կրող ժեստերը և ողջույնի բացականչությունները: Հայտնի «զիգ հայլը» *(«Sieg Heil»* նշանակում է *«կեցցե՛ հաղթանակը»)* շրջանառության մեջ է դրվել արդեն հիշատակված նյուրնբերգյան համագումարում: Նկատենք նաև, որ նացիստների ամենացայտուն ժեստը՝ աջ ձեռքն առաջ պարզելը, ֆյուրերը փոխ էր առել Հռոմի կեսարներից, բայց փոխել էր շարժման հետագիծը. կեսարները ողջունում էին Հելիոս աստծուն ափը վեր, Հիտլերն իր ժողովրդին ողջունում էր ափը ներքև, ինչը ճնշման նշանն է: Այս առիթով նշենք, որ ըստ արդեն հետպատերազմյան շրջանում կատարված հետազոտությունների, լայն լսարանին ուղղված ցանկացած «ուղերձ» կազմված է ընդամենը 7% բառերից, 38% ինտոնացիայից, իսկ տեղեկատվության մնացած 55%-ը փոխանցվում է ժեստերի լեզվով:

Վերոնշյալի համատեքստում բնական էր նացիոնալ-սոցիալիստների մեծ ուշադրությունը մամուլի նկատմամբ: Արդեն 1933թ. ընդունվում է մամուլի մասին օրենքը, որը փաստորեն հանգեցրեց նրան, որ խմբագրություններից հեռացվեցին հրեական ծագում ունեցող աշխատակիցները: Բավական արագ տոտալ վերահսկողություն սահմանվեց թերթերի և ամսագրերի վրա, իսկ «Ֆոլկիշե Բեոբախտեր» («Ազգային դիտորդ») թերթը, որը նացիոնալ-սոցիալիստների գլխավոր խոսափողն էր, գլխավորում է կուսակցության գլխավոր տեսաբան Ալֆրեդ Ռոզենբերգը:

Մամուլին զուգահեռ, նացիոնալ-սոցիալիստները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև պրոպագանդայի տեխնիկական միջոցներին, որոնցից կարևորագույնն այդ ժամանակաշրջանում ռադիոն էր: Նրանց ջանքերով 1933թ. սկսվեց այսպես կոչված «Ժողովրդական ռադիոընդունիչի» *(Ֆոլկս-էմպֆենգեր, Volks-empfänger)* զանգվածային արտադրությունը, որի գինը շուրջ 5 անգամ ավելի էժան էր, քան այն ժամանակ շրջանառության մեջ գտնվող ռադիոընդունիչներինը: Դա պետք է մատչելի դարձներ ռադիոընդունիչի գնումը և այդպիսով ապահովեր ռադիոհաղորդումների ունկնդրումն ամեն մի գերմանական ընտանիքում: Այդ հաղորդումներում Գեբելսը տեսնում էր նաև անհատականության և ինտելեկտուալների դեմ պայքարի հնարավորություններ: Ի լրումն, «պրոպագանդայի նախարարն» ամեն օր կազմակերպում էր մամլո ասուլիսներ, որոնցում օգտագործում էր նոր բառակապակցություններ, որոնք պետք է կիրառեին լրագրողները և այդպիսով «լվային» իրենց լսարանի «ուղեղները»:

Սակայն այն պահից, երբ պատերազմի անբարենպաստ ընթացքն էապես նվազեցրեց գերմանացիների հավատքը նացիոնալ-սոցիալիզմի հանդեպ, բնակչությունը դրանցով սկսեց ունկնդրել ոչ թե նացիստական առաջնորդների ճառերը, այլ, մասնավորապես, բրիտանական ռադիոհաղորդումները: Այսինքն՝ Ռեյխի «ներքին լսարանում» տեղի ունեցավ *խզում* նացիստական քարոզչության միջոցով ներշնչվող պատրանքների և իրականության միջև, ինչը ցանկացած բնույթի տեղեկատվական քաղաքականության համար տապալման կամ, նազագույնը, անհաջողության չափանիշ է հանդիսանում: Սակայն անգամ այդ իրավիճակում «Ժողովրդական ռադիոընդունիչների» վաճառքը շարունակվում էր, քանի որ մոլեռանդորեն տրամադրված նացիստական ղեկավարությունը համոզված էր, որ իրենց պրոպագանդան անհամեմատ ավելի գործուն է, քան հակառակորդինը, ինչը բնավ չէր համապատասխանում իրականությանը:

Գերմանիան առաջին երկրներից էր, որտեղ տարածում գտավ հեռուստատեսությունը: Բեռլինում 1935թ. սկսվեցին առաջին կանոնավոր հեռուստահաղորդումները, իսկ արդեն 1936-ին Գերմանիայում անցկացվող օլիմպիական խաղերը լիարժեքորեն լուսաբանվում էին հեռուստատեսությամբ: Գեբելսը հեռուստատեսության մեջ տեսավ քարոզչական աշխատանքի նոր հնարավորություններ, նա ծրագրում էր այդ տեղեկատվական միջոցը դարձ-

նել նույնքան զանգվածային, որքան ռադիոն: Սակայն պատերազմի ընթացքը խորտակեց նրա հույսերը:

Միևնույն ժամանակ, չնայած բոլոր ջանքերին, ներքին լսարանին ուղղված տեղեկատվական քաղաքականությունը հաջողություն ուներ միայն պատերազմի առաջին տարիներին, երբ վերմախտը (գերմանական բանակը) մեկը մյուսի հետևից գրավում էր Լեհաստանը, Ֆրանսիան և եվրոպական այլ երկրներ: Իհարկե, ժողովրդական ոգևորությունը սկսեց արագ մարել Արևելյան ճակատից ստացվող անմխիթար լրատվության և անգլո-ամերիկյան դաշնակիցների սաստկացող ռմբակոծություններին զուգընթաց:

Արտաքին լսարանին ուղղված տեղեկատվական գործողություններում գերմանական ծառայությունների ձեռքբերումները, չնայած առանձին հաջողություններին, շատ ավելի համեստ էին, թեև այդ ոլորտում նացիստները կարողացել էին կենտրոնացնել մարդկային և նյութական զգալի ռեսուրսներ:

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սկսելու նախաշեմին Գեբելսի նախարարության կազմում ստեղծվեց խիստ գաղտնի «Վինետա» կազմակերպությունը, որի գլխավոր խնդիրն էր հակառակորդի դեմ տեղեկատվա-հոգեբանական գործողություններ կազմակերպելը: «Վինետայի» մոտեցումները, թերևս, լավագույնս ներկայացված են պատերազմից հետո բացահայտված գրավոր ցուցումներում: Ըստ դրանց, տեղեկատվական գործողությունների գլխավոր նպատակը հակառակորդի զինվորների վստահությունը գրավելն է, և այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կիրառել ցանկացած մեթոդներ: Ինչպես գրված էր այդ փաստաթղթերում. «Քայքայման պրոպագանդան կեղտոտ գործ է, որն ընդհանուր ոչինչ չունի հավատի կամ աշխարհայացքի հետ: Այս գործում վճռականն ինքը՝ արդյունքն է: Եթե մեզ հաջողվի նվաճել հակառակորդի վստահությունը նրանով, որ մենք կեղտ լցնենք մեր ֆյուրերի և նրա զինակիցների, մեր մեթոդների և մեր աշխարհայացքի վրա, և եթե մեզ հաջողվի թափանցել հակառակորդի զինվորների՝ մեր առջև բացված հոգիները, նրանց մեջ քայքայիչ կարգախոսներ գցել (բնավ կապ չունի՝ կլինեն դրանք մարքսիստական, հրեական, թե մտավորականական կարգախոսներ, միայն թե գործուն լինեն), ապա դրանով անհամեմատ շատ ավելին ձեռք կբերվի, քան բոլշևիկյան վտանգի և պլուտոկրատական համակարգի մասին ամենահասկանալի քարոզով»: Նման մոտեցումների առիթով տեղին է հիշել Սուն Ցզիի հայտնի տրակտատի դրույթները:

Ինչպես և այլ երկրների տեղեկատվական պատերազմ վարող կառույցները, գեբելսյան գերատեսչությունը սերտորեն համագործակցում էր Ռեյխի հատուկ ծառայությունների հետ: Այդ համագործակցությունը լոկ տվյալներ ստանալով և փոխանակելով չէր սահմանափակվում: Օրինակ, գերմանական ռազմական հետախուզությունը՝ «Աբվերը»[1], ռուսների հոգեկերտվածքը հասկանալու համար բավական ծավալուն հետազոտություն էր կատարել, որտեղ ուսումնասիրել էին ռուսական «բիլինաները» (առասպելները) և ժողովրդական հեքիաթները: Այդ տվյալները մշակվում և ռեալ հարթությունում կիրառվում էին վերմախտի մի քանի մասնագիտացված վարչություններից կազմված Վարչական խմբում (ղեկավար՝ գեներալ-մայոր Հանս ֆոն Վիդալ), որը կազմակերպում էր անմիջական պրոպագանդիստական աշխատանքը ռազմական գործողությունների թատերաբեմերում: Այդ խմբի աշխատանքների լայնածավալության մասին է վկայում, մասնավորապես, այն փաստը, որ վերմախտի և էսէսական զորամիավորումների կազմում գործում էին պրոպագանդա վարող 33 վաշտ և մի հատուկ խումբ՝ բաղկացած 250 նկարիչներից: Իսկ գերմանական ռադիոկայաններն արդեն 1940թ. ամռանն իրականացնում էին հաղորդումներ 30 լեզուներով: Նման լայն լսարանի ընդգրկումը հասկանալու համար բավական է վերհիշել նացիոնալ-սոցիալիստների կարգախոսները՝ *«Գերմանիան վեր է բոլորից»* և *«Պրոպագանդան մեզ կօգնի նվաճել ողջ աշխարհը»:*

Պետք է նկատել, սակայն, որ տեղեկատվական գործողությունները պատերազմում չէին սահմանափակվում միայն քարոզչական աշխատանքով: Բավական արդյունավետ էր գործում գերմանական ռադիոռոսումների ծառայությունը: Օրինակ, նրանք սովորել էին նմանակել խորհրդային ղեկավարների ձայները և այդ եղանակով երբեմն համապատասխան «հրահանգներ էին տալիս» խորհրդային ռազմական ու վարչական ստորաբաժանումներին:

Բոլոր պարագաներում, չնայած բավական մեծ ջանքերին (միայն Արևելյան ճակատում գերմանացիները շուրջ 6 մլրդ թռուցիկ էին տարածել) Երրորդ ռեյխի պրոպագանդիստական–ագիտացիոն գործողությունները հակառակորդի դեմ՝ չնայած առանձին հաջողություններին, արդյունավետ չեղան: Դա

[1] Գերմաներեն *Abwehr* ՝պաշտպանություն: 1920-1944թթ. այդպես էին կոչվում գերմանական զինված ուժերի բոլոր այն կառույցները, որոնք իրագործում էին հետախուզության և հակահետախուզության գործառույթներ:

պայմանավորված էր այն փաստով, որ գերմանական հատուկ ՍՍ ստորաբաժանումները (որոնցում ծառայում էին միայն նացիոնալ-սոցիալիստական կուսակցության երաշխավորությունն ունեցողները), պատժիչ կառույցները, հատկապես քաղաքական ոստիկանությունը (գեստապոն) և ընդհանրապես օկուպացիոն զորքերն իրականացնում էին զանգվածային մահապատիժներ և դաժանություններ: Բավական է նշել, որ ԽՍՀՄ տարածքում ոչնչացվել է շուրջ 10 մլն խաղաղ բնակիչ, իսկ միայն Օսվենցիմի և Մայդանեկի համակենտրոնացման ճամբարներում սպանվել է շուրջ 1 մլն մարդ, որոնց հիմնական մասը կազմում էին հրեաները: Այս իրողություններն առաջացնում էին այսպես կոչված խզում ռեալ կյանքի և գերմանական տեղեկատվական միջոցներով հորինված պատկերացումների միջև: Ինչպես և ներքին լսարանի պարագայում (տե՛ս վերը), նման խզումն իմաստազրկում էր Երրորդ ռեյխի տեղեկատվա-հոգեբանական ջանքերը հակառակորդի և՛ խաղաղ բնակչության, և՛ զինվորականության միջավայրում: Այս իրողությունը հաստատում է Սուն Ցզիի այն ասույթը, որ «պատերազմում հարկ է խուսափել վայրագություններից, որովհետև դա դիմադրություն է առաջացնում և հակառակորդին հնարավորություն ընձեռում պատերազմը շրջել իր օգտին»:

Այսպիսով, նացիստների վարած ընդհանրական քաղաքականությունը, որի մեջ կարևորվում էր տեղեկատվական բաղադրիչը, ամենուր առաջացնում էր դիմադրություն, որը և հանգեցրեց Երրորդ ռեյխի տապալմանը:

Վերոնշյալից հետևում է, որ անգամ պրոֆեսիոնալ բարձր մակարդակով իրագործվող տեղեկատվա–հոգեբանական գործողություններն ունեն ազդեցության հստակ սահմանափակումներ: Եթե տեղեկատվական հորդորները և ներկայացվող «հրապույրները» հակասում են մարդկանց շրջապատող իրողություններին, ապա վաղ թե ուշ դրանք անխուսափելիորեն արժեզրկվում են և սկսում են աշխատել «հակառակ նշանով»: Նման պարագայում իրագործվող տեղեկատվական գործողությունները փաստացի վերածվում են հակապրոպագանդայի և հակաագիտացիայի՝ վարկաբեկելով և՛ ուղերձներում պարունակվող գաղափարները, և՛ դրանց հեղինակներին: Այս համատեքստում զարմանալի չէ, որ նացիստական գաղափարախոսությունը և Գեբելսի նախարարությունը՝ մասնավորապես, ավելի քան տխուր վախճան ունեցան:

Տարածաշրջան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. նոյեմբեր

Հրայր Փաշայան[*]

Ղարաբաղյան հակամարտություն. Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության ապակառուցողական քաղաքականության պատճառով ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում որևէ դրական տեղաշարժ տեղի չի ունեցել: Ավելին՝ նոյեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը և օրվա ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը 60 և 82 միլիմետրանոց ականանետերից արկակոծել են Թալիշ և Յարըմջա գյուղերի ուղղությամբ տեղակայված ԼՂՀ պաշտպանության բանակի առաջապահ դիրքերը: Ականանետերի նմանատիպ զանգվածային կիրառումը, որն Արցախի դեմ ապրիլյան լայնածավալ ագրեսիայից հետո առաջին անգամ է տեղի ունենում, դարձավ շփման գծում լարվածությունը սրելու՝ Ադրբեջանի կողմից վերջին շրջանում ձեռնարկվող գործողությունների շարունակությունը: Նման գործողությունները ոչ միայն կոպտորեն խախտեցին 1994-1995թթ. եռակողմ հրադադարի մասին համաձայնագիրը և 2016թ. Վիեննայի ու Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներում ձեռք բերված պայմանավորվածությունները, այլև վկայեցին Բաքվի մտադրության մասին՝ խոչընդոտել բանակցային գործընթացի վերսկսման պայմանների ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Արկակոծելով այն շրջանը, որտեղ նախօրեին ԵԱՀԿ առաքելությունը պլանային դիտարկում է իրականացրել, ադրբեջանական կողմը ձգտում է նաև խափանել հրադադարի ռեժիմի պահպանումը դիտարկող միակ միջազգային մեխանիզմը և հարցը տեղափոխել միջազգային այլ հարթակներ, որտեղ ավելի հեշտ կլինի սեփական ցանկություններին համապատասխան որոշումներ ըն-

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

դունելը: Պետք է նշել, որ այս ամենի արդյունքում այժմ փաստացի բանակցային գործընթաց, որպես այդպիսին, գոյություն չունի: Այն ժամանակավորապես սառեցված կմնա նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի և ամերիկացի համանախագահների փոփոխման պատճառով, քանի որ որոշակի ժամանակահատված կպահանջվի, որպեսզի նրանք ամբողջությամբ ծանոթանան հիմնախնդրին և ներգրավվեն խմբի աշխատանքներին, մանավանդ որ բանակցությունների վերակենդանացման համար, բացի քաղաքական ջանքերից, նոր և թարմ մոտեցումներ են անհրաժեշտ:

Հայաստան-Արցախ. Շարունակվել են հայկական երկու հանրապետությունների միջև տարբեր ոլորտներում փոխգործակցության ամրապնդմանն ուղղված քայլերը: Նոյեմբերի 4-ին աշխատանքային այցով Արցախ էր ժամանել Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորած պատվիրակությունը: ԼՂՀ նախագահի, կառավարության անդամների և Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ հանդիպումներում քննարկվել է հայկական երկու պետությունների տնտեսական և քաղաքական համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Ուշագրավ էր զույգ հայկական պետությունների գործադիր մարմինների միջև համագործակցության հիմնական ուղղություններն ու խնդիրները քննարկելուն ուղղված՝ կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ հրավիրված աշխատանքային խորհրդակցությունը: Խորհրդակցությանը ԼՂՀ էկոնոմիկայի նախարար Ա.Խաչատրյանը ներկայացրել է 2007-2015թթ. տնտեսության զարգացման ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն՝ անդրադառնալով տարբեր ոլորտների զարգացման գործիքակազմերին և խնդիրներին: Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրեն Արտակ Միրզոյանն ու Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Աշոտ Բախշիյանը ներկայացրել են իրենց ղեկավարած կառույցների գործառույթներն ու ցուցանիշները: Վարչապետ Ա.Հարությունյանը ներկայացրել է ներդրումային և գյուղատնտեսական ծրագրերի ուղղությամբ կառավարության քաղաքականության հիմնական տրամաբանությունը՝ շեշտադրելով, որ նշված հիմնադրամները բազմակողմանի աջակցություն են տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին՝ նպատակ ունենալով թե՛ խթանել տնտեսական ակտիվությունը, թե՛ ավելացնել բնակչության եկամուտները և թե՛ աջակցել խնդիրներ ունեցող ձեռնարկություններին: Կառավարության ղեկավարը բարձր է գնահատել եր-

կու հիմնադրամների դերակատարումը վերջին տարիներին Արցախի տնտեսական բարձր և կայուն աճի ապահովման գործում՝ պատրաստակամություն հայտնելով հանրապետության կառավարության կուտակած փորձով կիսվել ՀՀ գործընկերների հետ: Կ.Կարապետյանը դրական տպավորություն է արտահայտել հիմնադրամների գործունեության ու կիրառվող գործիքակազմի վերաբերյալ և հանձնարարել ՀՀ համապատասխան պաշտոնյաներին՝ փորձի փոխանակման միջոցով քայլեր ձեռնարկել ՀՀ-ում ևս նմանատիպ կառույցներ հիմնելու և գործունեություն ծավալելու ուղղությամբ: Խորհրդակցության ընթացքում կողմերն առաջ են քաշել կոնկրետ առաջարկներ և ձեռք բերել փոխադարձ պայմանավորվածություններ դրանց կյանքի կոչման ուղղությամբ: Հանդիպման ավարտին կառավարությունների ղեկավարները տվել են համապատասխան հանձնարարականներ՝ վերհանված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով: Վերջում, երկու կառավարությունների ղեկավարների գլխավորությամբ, առանձին խորհրդակցություն է տեղի ունեցել էներգետիկայի ոլորտում համագործակցության կոնկրետ ծրագրերի շուրջ: Կողմերը ձեռք են բերել պայմանավորվածություններ հետագա անելիքների վերաբերյալ:

Նոյեմբերի 6-ին ԼՂՀ ԱԺ նիստերի փոքր դահլիճում տեղի է ունեցել Արցախի խորհրդարանի պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության ու ՀՀ խորհրդարանի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստը՝ ԼՂՀ ԱԺ նախագահի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում մշտական հանձնաժողովների նախագահներ Ժաննա Գալստյանը և Կորյուն Նահապետյանն ամփոփել են նոյեմբերի 4-6-ը ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի անդամների այցի ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքները: Նիստի ընթացում պատգամավորները քննարկել են երկու հանձնաժողովների հետագա անելիքները և ուրվագծել մի շարք ուղղություններ: Խորհրդարանականներն այցի ընթացքում եղել են ՊԲ զորամասերում, մարտական դիրքերում, հանդիպումներ են ունեցել շրջանների վարչակազմերի և ԼՂՀ պաշտպանության նախարարի հետ:

Նոյեմբերին Արցախ այցելեցին նաև Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, արտգործնախարարի տեղակալներ Շավարշ Քոչարյանն ու Կարեն Նազարյանը, սպորտի և երիտասարդության հարցերի

նախարար Հրաչյա Ռոստոմյանը, գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և ՀՀ զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ Արտավազդ Հարությունյանը: ԱՀ նախագահի, ԱԺ խոսնակի և համապատասխան պաշտոնյաների հետ հանդիպումներում քննարկվել են նշված ոլորտներում փոխգործակցության և հարաբերությունների շարունակական ամրապնդմանն առնչվող հարցեր:

Արցախ-Սփյուռք. Նոյեմբերի 24-ին Լոս Անջելեսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո 19-րդ անգամ մեկնարկեց հեռուստամարաթոն-դրամահավաքը: Արցախի իշխանությունների առաջարկով՝ հիմնադրամի հոգաբարձուների կողմից որոշվել է «Հեռուստամարաթոն 2016»-ի ընթացքում հավաքված միջոցներն ուղղել գլխավորապես Ադրբեջանի սանձազերծած ապրիլյան պատերազմի հետևանքների վերացմանը, ինչպես նաև նախկինում սկսված ծրագրերի իրականացմանը: Դրան համապատասխան՝ «Հեռուստամարաթոն 2016»-ը կրում էր «Իմ Արցախը» խորագիրը: Չնայած ամբողջ աշխարհում տիրող տնտեսական դժվարություններին, դրամահավաքի արդյունքում հաջողվեց հավաքել $15 մլն 428.777, ինչը վկայությունն է այն բանի, որ աշխարհասփյուռ հայությունը պատրաստ է համախմբվել Արցախի շուրջ և նպաստել համազգային խնդիրների լուծման գաղափարի իրականացմանը:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման շրջանակներում Արցախ ժամանեցին սփյուռքահայ մի շարք բարերարներ ու մշակութային գործիչներ: Ռուսաստանաբնակ բարերարների նախաձեռնությամբ Արցախի բազմազավակ ու կարիքավոր ավելի քան 30 ընտանիքների որպես աջակցություն տրամադրվել են հագուստ, կահույք, կենցաղային տեխնիկա և այլ պարագաներ: Արցախի և Սփյուռքի միջև համագործակցության նոր՝ ավելի բարձր մակարդակ է ձևավորվում մշակութային ոլորտում: Սփյուռքահայ մեր հայրենակիցներն այցելելով Արցախ՝ կազմակերպում են դասախոսություններ, սեմինար պարապմունքներ, կիսում են իրենց գիտելիքներն ու փորձը, դրանով իսկ նպաստում ԼՂՀ զարգացմանը: Այդ շրջանակներում Արցախ ժամանեցին ՌԴ ԳԱ ակադեմիկոս Արտեմ Սարգսյանը, ռուսաստանաբնակ հայտնի նկարիչ Յուրի Գրիգորյանը, Օքսֆորդի համալսարանից դոկտոր Հրաչ Չիլինգիրյանը, արձակագիր Նարինե Աբգարյանը: Նրանց ինքնատիպ ստեղծագործությունների միջոցով հասարակության լայն շրջանակները հնարավորություն են ստա-

նում հաղորդակից դառնալ հայկական մշակույթին, արժեքներին ու ավանդույթներին՝ նպաստելով նաև Սփյուռքում հայապահպանության գործին:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը նոյեմբերի 24-ին ընդունել է մի խումբ գիտնականների, ովքեր ուսումնասիրություններ և պեղումներ են իրականացնում ԼՂՀ Հադրութի շրջանի Ազոխի քարանձավում: Հնագիտական պեղումների իրականացմանը գործուն մասնակցության, «Ազոխի քարանձավը և կովկասյան միջանցքը» գրքի հեղինակման և այն միջազգային գիտական շրջանակներում ներկայացնելու համար Լևոն Եպիսկոպոսյանը (Հայաստանի Հանրապետություն), Փիթեր Ջոն Էնդրյուսը, Տանիա Քրիստինե Քինգը (Մեծ Բրիտանիա), Ջոն Մյուրեյը (Իռլանդիա), Իռլանդա Ֆերնանդես-Խալվոյը (Իսպանիա) պարգևատրվել են «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ նրանց հետազոտություններն ունեն մեծ գիտական նշանակություն մարդու էվոլյուցիայի ուսումնասիրման գործում՝ երախտագիտություն հայտնելով կատարված աշխատանքի համար:

Նոյեմբերի 28-ին Արցախում էին «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի անդամներ, Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Էրվան Բինեն և Ժակ Ռեմիլեն: Նախագահ Բակո Սահակյանի և արտգործնախարար Կարեն Միրզոյանի հետ հանդիպումներում քննարկվել են Ֆրանսիա-Արցախ հարաբերություններին վերաբերող հարցեր:

Նախագահ Սահակյանը բարձր է գնահատել «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի գործունեությունը՝ նշելով, որ այն մեծապես նպաստում է երկկողմ կապերի խորացմանն ու ընդլայնմանը:

ՎՐԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. նոյեմբեր

Ջոնի Մելիքյան*

Ընթացիկ տարվա ավարտը բավական արդյունավետ և ակտիվ էր Վրաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների առումով: Հոկտեմբեր-նոյեմբերին ընտրական կարճատև ընդմիջումից հետո՝ կապված խորհրդարանական ընտրությունների և երկրի նոր կառավարության ձևավորման հետ, դեկտեմբերի սկզբից արդեն պաշտոնական Թբիլիսին վերադարձավ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրագործմանը: Կանգ առնենք Վրաստանի ղեկավարության՝ նախագահի, վարչապետի և ԱԳՆ ղեկավարի արտաքին քաղաքական ակտիվության վրա:

Նոյեմբերի 25-26-ին Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին աշխատանքային այցով մեկնել է Թուրքմենստան, որտեղ մասնակցել է Կայուն տրանսպորտային համակարգի վերաբերյալ առաջին գլոբալ կոնֆերանսին, որը տեղի էր ունենում ՄԱԿ հովանու ներքո: Աշգաբադ այցելության ընթացքում Վրաստանի նախագահը, բացի կոնֆերանսում ելույթ ունենալուց, նաև հանդիպումներ է ունեցել ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունի, Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի և Աֆղանստանի նախագահ Աշրաֆ Գանիի հետ: Աֆղան պաշտոնակցի հետ հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են երկու երկրների քաղաքական, տնտեսական (տրանսպորտային), մշակութային համագործակցության հարցեր: Աֆղանստանի նախագահը Գեորգի Մարգվելաշվիլուն հրավիրել է այցելել իր երկիր:

Արդեն դեկտեմբերի սկզբին (դեկտեմբերի 7-8) Վրաստանի նախագահ Գ.Մարգվելաշվիլին աշխատանքային այցով մեկնել էր Ֆրանսիա, որտեղ մասնակցել է «Բաց կառավարման գործընկերության» (*OGP*) չորրորդ գլոբալ գագաթաժողովի (որին մասնակցում էր 3000 ներկայացուցիչ աշխարհի 70 երկրից) աշխատանքին: Գ.Մարգվելաշվիլին, լինելով մի երկրի նախագահը, որը

---

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

2017-ից դառնալու է *OGP* նախագահող երկիրը, ելույթ ունեցավ գիտաժողովում: Նա մի շարք երկկողմ հանդիպումներ ունեցավ, այդ թվում նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի ստորին պալատի նախագահ Կլոդ Բարթոլոնեի հետ:

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին այցելեց Հայաստան (նոյեմբերի 4), որտեղ հանդիպեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ և մասնակցեց «Բագրատաշեն» արդիականացված անցակետի բացման արարողությանը: Կողմերը ծանոթացան հայ-վրացական «Բարեկամության կամրջի» կառուցման նախապատրաստական աշխատանքներին, որի մասին համապատասխան պայմանագիրը ձևակերպվել էր 2014թ. դեկտեմբերին, իսկ իրականացումը նախատեսվում է 2017-18թթ.: Բանակցությունների ընթացքում կողմերը դիտարկեցին առևտրի, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում համագործակցության խորացման հարցեր:

Վրաստանի կառավարության նոր կազմի հաստատումից հետո առաջին կարևոր այցը Վրաստանի վարչապետի և վրացական պատվիրակության եռօրյա այցելությունն էր Բրյուսել (30 նոյեմբերի – 1 դեկտեմբերի): Այցի ընթացքում վրացական կառավարության ղեկավարը հանդիպումներ է ունեցել ԵՄ ղեկավարության (Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի և փոխնախագահներ Մանֆրեդ Վեբերի ու Ջանի Պիտելայի, ԵՄ Խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Յոհանես Խանի, միգրացիայի, ներքին գործերի և քաղաքացիության հարցերով եվրահանձնակատար Դիմիտրիս Ավրամոպուլոսի, կլիմայի և էներգառեսուրսների հարցերով եվրահանձնակատար Միգել Արիաս Կանյետեի, առևտրի հարցերով եվրահանձնակատար Սեսիլիա Մալմսթրեմի, ինչպես նաև Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Էլմար Բրոքի) հետ:

Բանակցությունների հիմնական թեման եվրոպական ինտեգրման հարցերն են եղել, ժողովրդավարական բարեփոխումները, ինչպես նաև պաշտոնական Թբիլիսիի ակնկալիքը, որ Բրյուսելը կմտցնի անվիզա ռեժիմ Վրաստանի քաղաքացիների համար ԵՄ և Շենգենյան գոտու երկրներում: Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Վրաստանի և ԵՄ Ասոցիացման խորհրդի հերթական՝ երրորդ նիստը, որտեղ քննարկվեց Վրաստանի և ԵՄ-ի միջև ասոցիաց-

ման համաձայնագրի իրագործման հարցը, ինչպես նաև այն առաջընթացը, որը ձեռք է բերվել Ազատ առևտրի համապարփակ գոտու մասին համաձայնագրի իրագործման արդյունքում, և որը լիովին ուժի մեջ է մտել 2016թ. հուլիսից: Նիստի նախագահողներն էին ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին և Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին: Վերջինս այցելեց նաև Հյուսիսատլանտյան դաշինքի կենտրոնատեղի, որտեղ հանդիպեց ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Ենս Սթոլթենբերգի հետ:

Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն դեկտեմբերի 6-7-ին այցելեց Բրյուսել, որտեղ ՆԱՏՕ արտգործնախարարների մակարդակով հանդիպմանը մասնակցեց Աֆղանստանում ամուր աջակցության առաքելության (*Resolute Support Mission*) մասնակից երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների նիստին: Ջանելիձեն երկկողմ հանդիպումներ ունեցավ իր գործընկեր նախարարների (Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Լիտվայի, Իսպանիայի, Հունաստանի, Շվեդիայի և Էստոնիայի արտգործնախարարների) և ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի նոր տեղակալ Ռոուզ Գոթեմյուլերի հետ:

Արդեն հաջորդ օրը (դեկտեմբերի 8-9) Վրաստանի արտգործնախարար Մ.Ջանելիձեն մասնակցեց ԵԱՀԿ ԱԳՆ նախարարների 23-րդ նստաշրջանին, որն անցկացվում էր գերմանական Համբուրգում: Նա ելույթ ունեցավ լիագումար նիստում, հանդիպումներ ունեցավ Ժնևյան միջազգային բանավեճերի համանախագահների և ԵԱՀԿ ինստիտուտների ղեկավարների հետ: ՎՈՒԱՄ-ում նախագահության նախօրեին (2017թ.), Համբուրգ այցելության ընթացքում, տեղի ունեցան վրացական պատվիրակության հանդիպումները ՎՈՒԱՄ ձևաչափով:

Նոյեմբերի 6-7-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց Իտալիայի արտգործնախարար Պաոլո Ջենտիլոնին: Դիվանագետը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու և իր վրաց պաշտոնակից Միխայիլ Ջանելիձեի հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության խորացման հարցեր, Իտալիան աջակցություն է հայտնել Վրաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև երկրի՝ ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ձգտումներին: Հայտարարվել է, որ վրացական կառավարության ղեկավարը 2017թ. հունվարին կայցելի Իտալիա:

Ավելի ուշ՝ նոյեմբերի 24-ին, Թբիլիսի այցելեց Մեծ Բրիտանիայի՝ Եվրոպայի և Ամերիկայի հարցերով արտաքին գործերի և համագործակցության նախարարության պետնախարար Ալան Դունկանը, որը հանդիպեց Վրաստանի նախագահի, վարչապետի և արտգործնախարարի հետ: Բրիտանացի պաշտոնյան բաց արեց նաև «Ուորդրոփյան երկխոսության» շրջանակներում տեղի ունեցող լիագումար նստաշրջանը, որը հիմնվել է 2014թ.՝ Վրաստանի և Մեծ Բրիտանիայի միջև համագործակցության հարցերի ավելի լայն շրջանակի քննարկման նպատակով: Այդ հարցերի թվում են՝ համագործակցությունը քաղաքականության, անվտանգության և պաշտպանության ոլորտներում, տնտեսական և առևտրային թեմատիկան և մշակույթի, կրթության ու ժողովուրդների միջև հարաբերությունների հարցերը:

Դեկտեմբերի 8-ին աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց Ադրբեջանական Հանրապետության մշակույթի և զբոսաշրջության նախարար Աբուլֆաս Գարաևը, որը մասնակցեց «Մշակույթը և ստեղծագործությունը ինովացիայի և զարգացման համար» միջազգային համաժողովին (կազմակերպվել էր Եվրամիության և Վրաստանի մշակույթի ու հուշարձանների պահպանման նախարարության կողմից): Ադրբեջանցի նախարարին ընդունել է նաև Վրաստանի վարչապետը: Հանդիպման արդյունքներով նշվել է, որ կողմերը քննարկել են ռազմավարական գործընկերության և դինամիկ կերպով զարգացող մշակութային հարաբերությունների հարցեր:

Պատրիարքական դիվանագիտություն. Վրաստանի արտաքին քաղաքական գործունեությանն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարք-կաթողիկոսը: Նոյեմբերի սկզբին հայտարարվեց, որ ՎՈՒԵ հովվապետը՝ պատրիարք Իլյա Երկրորդը, նոյեմբերի 18-25-ին այցելելու է Մոսկվա ՌՈՒԵ հրավերով՝ մասնակցելու Համայն Ռուսիո և Մոսկվայի պատրիարք Կիրիլի 70-ամյակի հանդիսավոր միջոցառումներին:

Չնայած միջպետական հարաբերությունների ողջ բարդությանն ու Վրաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը՝ 2008թ. օգոստոսի կոնֆլիկտից հետո, երկու երկրների եկեղեցիների շփումները ոչ միայն շարունակվում են, այլև ամրապնդվում: Ռուս Ուղղափառ եկեղեցին ցայժմ ընդունում է ՎՈՒԵ կանոնիկ տարածքը, որի մեջ մտնում են նաև Աբխազիան ու Հարավային Օսիան, ինչը չի կարող չազդել ՎՈՒԵ բարեհաճության և ՌՈՒԵ-ի հետ համագործակցության պատրաստակամության վրա:

Այսպիսով, արդեն Մոսկվա կատարած այցի ընթացքում, հանդիպելով պատրիարք Կիրիլի հետ պատրիարքական նստավայրում, ՎՈՒԵ հովվապետը հետաքրքիր հայտարարություն արեց այն մասին, որ Ռուսաստանի և Վրաստանի միջև փոխհարաբերությունների կարգավորումը «խիստ կարևոր է», քանի որ այդ երկրները «մեկը մյուսի կարիքն ունեն»: Իլյա Երկրորդը վրաց ժողովրդի անունից շնորհավորեց ՌՈՒԵ հոգևոր առաջնորդին հոբելյանի առիթով և նշեց, որ Վրաստանը պետք է լինի Արևելքի և Արևմուտքի խաղաղ համագործակցության, բարիդրացիության վայրը, իսկ դիմակայությունը տեղ չպետք է ունենա, որովհետև այն կարող է վերաճել գլոբալ կոնֆլիկտի: Համայն Ռուսիո և Մոսկվայի պատրիարքն իր հերթին ՎՈՒԵ-ի հետ հարաբերություններն անվանեց «կապ սրտերի մակարդակով», առանց որի չի կարող բարի կապ լինել ժողովուրդների միջև:

Վերադառնալուց առաջ՝ նոյեմբերի 23-ին, Գիորգոբի (Սբ Գևորգ) տոնին Մոսկվայի վրացական եկեղեցում Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոսը հանդիսավոր պատարագ մատուցեց, որից հետո հանդիպեց Մոսկվայի վրացական սփյուռքի ներկայացուցիչների հետ:

ՎՈՒԵ-ն բաց չթողեց նաև իրեն և իր դիվանագիտությունը ցուցադրելու հնարավորությունը Վրաստանի հիմնական արտաքին քաղաքական վեկտորի՝ եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասով: Մինչ մոսկովյան այցելությունը, նոյեմբերի 7-11-ին, Բրյուսել ուղևորվեց Վրաստանի Սուրբ սինոդի և պատրիարքության առաջին պաշտոնական պատվիրակությունը: Այցի ընթացքում բարձրաստիճան հոգևորականներն այցելեցին ՆԱՏՕ և Եվրամիության կենտրոնատեղի, ինչպես նաև եղան Եվրախորհրդարանում: Նախագծին աջակցություն ցուցաբերեցին նաև Զարգացման և դեմոկրատիայի կենտրոնը, Հյուսիսատլանտյան դաշինքը, ՆԱՏՕ և ԵՄ Տեղեկատվական կենտրոնը Վրաստանում, ինչպես նաև եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարարի ապարատը՝ Վրաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Պաշտոնական հանդիպումների ընթացքում վրացական հոգևորականների պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի՝ Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների գծով հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ափաթուրայի, ԵՄ Արտաքին ծառայության՝ ԶԼՄ ոլորտում արագ արձագանքման խմբի ղեկավար Ժիլ Փորթմանի, Ար-

տաքին գործողությունների եվրոպական ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով գլխավոր տնօրեն Թոմաս Մայեր Հարթինգի, ինչպես նաև հումանիտար օգնության և ճգնաժամերի կառավարման գծով եվրահանձնակատար Խրիստոս Ստիլիանիդիսի հետ: Նշվեց, որ այդ հանդիպումների ընթացքում «քննարկվել է եվրոպական ինտեգրման և Եվրամիության ու Վրաստանի ընդհանուր արժեքների կարևորությունը»:

Այցելության արդյունքներով վրացական պատվիրակության ներկայացուցիչները նշել են, որ «ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը ճիշտ պատկերացում չեն ունեցել ՎՈՒԵ-ի մասին, ինչպես և ՎՈՒԵ-ն՝ մի շարք հարցերի շուրջ նրանց քաղաքականության վերաբերյալ», ավելացնելով, որ վրաց պատրիարքը մեծ նշանակություն է տալիս այս այցին, և ուրախություն են հայտնել ՆԱՏՕ կենտրոնատեղիում ջերմ ընդունելության առիթով՝ նշելով, որ մանրամասն տեղեկություն են ստացել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Վրաստանի հարաբերությունների մասին: Վրաց հոգևորականների պատվիրակությունը Բրյուսելում հանդիպել է նաև վրացական սփյուռքի ներկայացուցիչների հետ:

Վրաստան-ԱՄՆ. Հանրապետական Դոնալդ Թրամփի ընտրությունը ԱՄՆ նախագահի պաշտոնում չէր կարող աննկատ մնալ Թբիլիսիում. այն տարբեր գնահատականներ և մեկնաբանություններ է ստացել: Պաշտոնական Թբիլիսիի մտահոգությունը հասկանալի է, քանի որ ԱՄՆ-ը, համաձայն Վրաստանի Ազգային անվտանգության հայեցակարգի (2011թ. խմբագրություն), կարևոր ռազմավարական գործընկեր է, որի հետ դիվանագիտական հարաբերություններն արդեն քառորդ դարի պատմություն ունեն:

Այսօրվա դրությամբ, Վրաստանի և ԱՄՆ-ի 2009թ. Ռազմավարական գործընկերության խարտիային զուգահեռ, որը կարգավորում է պաշտոնական Վաշինգտոնի և Թբիլիսիի փոխհարաբերությունների բոլոր ոլորտները, 2016թ. հուլիսի 6-ից գոյություն ունի նաև «Պաշտպանության և անվտանգության ոլորտում ԱՄՆ-ի հետ Վրաստանի գործընկերության խորացման մասին հուշագիրը»՝ ստորագրված ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի Վրաստան կատարած այցելության ընթացքում: Իրավական այս բազան ունենալով՝ երկրի իշխանություններին անհրաժեշտ էր այնպիսի թեկնածուի հաղթանակը, ով ոչ միայն երես չէր թեքի տարածաշրջանից, այլև կուժեղացներ իր ներկայությունը Հարավային Կովկասում: Այդպիսի թեկնածու կարող էր դառնալ Հիլարի Քլինթոնը, բայց հաղթանակ տարավ Թրամփը:

Մեկնաբանելով առաջիկա ընտրությունները՝ Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին ասել էր, որ պաշտոնական Վաշինգտոնը Վրաստանի ամենակարևոր ռազմավարական գործընկերն է, և Թբիլիսին «կպաշտպանի ամերիկյան ժողովրդի ընտրությունը»: Արդեն արդյունքների հրապարակումից հետո Վրաստանի նախագահը հայտարարեց, որ «անհամբերությամբ և մեծ հույսով» սպասում է ԱՄՆ-ի հետ հետագա համագործակցությանը նոր վարչակազմի օրոք, իսկ վարչապետ Կվիրիկաշվիլին մեկ անգամ ևս հաստատեց իր հայտարարությունն առ այն, որ երկրի իշխանությունները պատրաստ են շարունակել համագործակցությունը ԱՄՆ նախագահի նոր աշխատակազմի հետ, քանի որ «ամերիկյան ժողովուրդը քվեարկել է փոփոխությունների օգտին, որոնք կողմնորոշված են Միացյալ Նահանգների ուժեղացմանը»: Անմասն չմնաց նաև վրաց հոգևոր առաջնորդ Իլյա Երկրորդը, որը ՌՈՒԵ ղեկավարից հետո ինքն էլ շնորհավորեց Թրամփին ԱՄՆ նախագահական ընտրություններում տարած հաղթանակի համար:

Վրացիների մտահոգությունները փարատեց նաև Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելին, որը վստահություն հայտնեց, որ ընտրություններից հետո աջակցությունը Վրաստանին Վաշինգտոնի կողմից կշարունակվի:

Դեկտեմբերին մտահոգությունը թուլացավ, իսկ ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալի Վրաստան կատարած այցի ընթացքում Մայքլ Քարփենտերը և Վրաստանի պաշտպանության նախարար Լևան Իզորիան շրջանակային պայմանագիր կնքեցին 2016-2019թթ. անվտանգության ոլորտում համագործակցության վերաբերյալ, որը պետք է օժանդակի Վրաստանի պաշտպանության հետագա զարգացմանը և որն ամեն տարի կվերանայվի ու կթարմացվի: Այսպիսով, պայմանագիրը դարձավ «Վրաստանի և ԱՄՆ-ի միջև պաշտպանության և անվտանգության ոլորտում համագործակցության խորացման մասին հուշագրի» շարունակությունը՝ ստորագրված 2016թ. հուլիսին Թբիլիսիում: Վրացական կողմի տեղեկատվության համաձայն՝ փաստաթուղթը հետապնդում է հետևյալ նպատակները. բարելավել Վրաստանի Զինված ուժերի պաշտպանական հնարավորությունները, ձևավորել Վրաստանի պաշտպանության արդյունավետ և կայուն համակարգեր, ամրացնել ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի ԶՈՒ համատեղելիությունը, ապահովել պրոֆեսիոնալ և արդյունավետ ռազմական կառավարում:

Դեկտեմբերի 7-ին պաշտպանության նախարար Լ.Իզորիայի, Գլխավոր շտաբի պետ Վ.Չաչիբիայի և Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելիի ներկայությամբ ավարտվեցին հատուկ գործողությունների ուժերի վրաց-ամերիկյան երկամսյա դաշտային և տեսական դասընթացները, որոնք անցկացվում էին ամերիկյան հրահանգիչների կողմից: Ինչպես արդեն նշվել էր 2016-2019թթ. անվտանգության ոլորտում համագործակցության մասին պայմանագրում, Վրաստանի հատուկ գործողությունների ուժերի հնարավորությունների մեծացումը դառնալու է վրաց-ամերիկյան համագործակցության հիմնական ուղղություններից մեկն առաջիկա երեք տարիներին:

Վրաստան-ԵՄ. Չնայած հոկտեմբերի 5-ին Եվրամիության անդամ երկրների մշտական ներկայացուցիչների կոմիտեն ԵՄ Խորհրդի անունից պաշտպանել էր կարճաժամկետ անվիզա ռեժիմ մտցնելու որոշումը Վրաստանի քաղաքացիների համար, այդ գործընթացում առաջընթաց չի գրանցվել: Հոկտեմբերի 27-ին Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի կոմիտեն (*LIBE*) կոչ արեց ԵՄ Խորհրդին՝ հանձին նախագահող երկիր Սլովակիայի, «որքան հնարավոր է արագ, նոյեմբերի սկզբին» սկսել եռակողմ բանակցությունները՝ Վրաստանի համար վիզային ազատականացում մտցնելու նպատակով, «առանց հետագա ձգձգումների»: Տեքստում դժգոհություն էր հայտնվել նաև ԵՄ Խորհրդի որոշման հետ կապված, որի համաձայն՝ եռակողմ բանակցությունները չպետք է սկսվեին մինչև այն պահը, քանի դեռ ձեռք չի բերվել համաձայնություն Եվրախորհրդարանի հետ այսպես կոչված անվիզա ռեժիմը դադարեցնելու մեխանիզմներ մտցնելու մասին:

Բրյուսելի անվճռականությունը տեսնելով, ինչպես նաև հիմնվելով Եվրախորհրդարանի տեղեկատվության վրա, որը տարածվել էր նոյեմբերի վերջին առ այն, որ անվիզա ռեժիմի գործարկումը Վրաստանի և Ուկրաինայի համար հետաձգվելու է մինչև 2017թ. հունվարի 17-ը, Վրաստանի ԱԳՆ ղեկավար Մ.Ջանելիձեն հայտարարել է, որ եթե Եվրամիությունն այսուհետ ևս ձգձգի Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի չեղարկման գործընթացը, «դա կարող է եվրաթերահավատություն առաջացնել երկրի բնակչության շրջանում»: Ըստ նրա՝ բազմամյա բարեփոխումներից և առաջընթացից հետո երկրում այդ առիթով «բարձր են սպասելիքները»:

Արձագանքելով պաշտոնական Թբիլիսիի մտահոգությանը՝ Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը Վրաստանի վարչապետի հետ հանդիպումից հետո, դեկտեմբերի սկզբին, հայտարարել է, որ Վրաստանն արժանի է, որ ԵՄ-ը ժամանակին որոշի վիզաների չեղարկման հարցը, քանի որ երկիրը կատարել է բոլոր պարտավորությունները: Նա նաև «բարձր է գնահատել» բարեփոխումների ծրագիրը, որոնք իրականացվում են Վրաստանի և ԵՄ ասոցիացման համաձայնագրի շրջանակում:

Այնուամենայնիվ, մի քանի օր անց՝ դեկտեմբերի 8-ին, Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի կոմիտեն 37 ձայնով պաշտպանեց երրորդ երկրների համար անվիզա ռեժիմի արագ դադարեցման այսպես կոչված մեխանիզմի ընդունումը, որի շուրջ դեկտեմբերի 7-ին պայմանավորվածություն էին ձեռք բերել Եվրախորհրդարանը, Եմ Խորհուրդը և Եվրահանձնաժողովը ԵՄ անդամ երկրների մշտական ներկայացուցիչների կոմիտեի (*COPERER*) շրջանակներում: Այսպիսով, նշված փաստաթուղթը, որը դրվեց Եվրախորհրդարանի քվեարկությանը, բացեց Վրաստանին և Ուկրաինային անվիզա ռեժիմ շնորհելու հարցի լուծման ճանապարհը:

Այս հարցի վերաբերյալ մեկնաբանություններում «Ազատություն» ռադիոյի բրյուսելցի թղթակից Ռիկարդ Յոզվյակը նշել է, որ Վրաստանի քաղաքացիների համար անվիզա ռեժիմի ազատականացման հարցը նախատեսված է քննարկել դեկտեմբերի 14-ին, ինչը վկայում է այն մասին, որ Թբիլիսին կարող է ԵՄ-ի հետ անվիզա ռեժիմ ստանալ Ուկրաինայից առաջ: Հարցի վերջնական լուծման համար պետք է նաև քվեարկություն տեղի ունենա Եվրախորհրդարանում: Այսպիսով, սպասվում է, որ գործընթացի ավարտին Վրաստանի քաղաքացիները հնարավորություն կստանան կարճաժամկետ այցելություններ կատարել Շենգենյան գոտու տարածքում (ընդգրկում է ԵՄ 22 անդամ երկիր, 4 երկիր, որոնք ԵՄ անդամ չեն և 4 երկիր, որոնք հավակնում են մտնել Շենգենյան գոտի), մինչև 90 օր՝ 180 օրվա ընթացքում:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. նոյեմբեր

Ռոման Կարապետյան*

ԱՄՆ նախագահի ընտրությունները և Իրանի համար առավել անցանկալի թեկնածու Դոնալդ Թրամփի հաղթանակը դարձավ իսլամական հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգի թոփ հարցը: Պաշտոնական Թեհրանը շարունակ հռետորաբանության մակարդակով ցուցադրում է, թե ԱՄՆ նախագահի փոփոխությունը չի կարող ազդել իսլամական հանրապետության արտաքին քաղաքական գծի վրա, սակայն հարցին չափից շատ անդրադարձը ցույց է տալիս, որ ԱՄՆ քաղաքական տեղաշարժերն առնվազն անհանգստացնում են Իրանին: Վերջինիս Դոնալդ Թրամփի քաղաքական «հարձակումներից և շանտաժներից» պաշտպանելու պատրաստակամությունը ստանձնել են եվրոպական երկրները:

Իրան-Արևմուտք. Մեկնաբանելով նոյեմբերի 8-ին կայացած ԱՄՆ նախագահական ընտրություններում Դոնալդ Թրամփի հաղթանակը, որը քարոզարշավի ընթացքում աչքի է ընկել Իրանի նկատմամբ վարվելիք քաղաքականության վերաբերյալ կոշտ առաջարկներով, Իրանի նախագահ Հասան Ռոհանին ասել է, որ այն չի կարող ազդել Իրանի արտաքին քաղաքականության վրա: ԻԻՀ արտաքին գործերի նախարարության խոսնակ Բահրամ Քասեմին նշել է, որ ԱՄՆ քաղաքականությունը տարածաշրջանում սպառել է իրեն՝ բերելով այստեղ ահաբեկչության և ծայրահեղականության աճ, ուստի այն վերանայման կարիք ունի: Երկրի արտաքին գերատեսչության ղեկավար Ջավադ Զարիֆը, մեկնաբանելով միջուկային համաձայնագրի վերաբերյալ Թրամփի՝ նախկինում արած հայտարարությունները, ասել է, որ ԱՄՆ նորընտիր նախագահն այլ ելք չունի՝ այդ համաձայնագրի կետերը կատարելուց բացի: Երկրի ռազմական ղեկավարությունը հայտարարել է, որ եթե ԱՄՆ-ը չկատարի համաձայնագրի կետերը, իրենք այն կուղարկեն թանգարանային

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

արխիվ: Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհին խոսել է այն մասին, որ Իրանն արդեն նախատեսել է համապատասխան քայլեր, եթե ԱՄՆ-ը որոշի չեղարկել միջուկային համաձայնագրերը: Նշենք, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում Թրամփը խոստանում էր ընտրվելու պարագայում չեղյալ համարել Իրանի հետ միջուկային համաձայնագիրը, սակայն հետագայում մի-փոքր մեղմեց տոնը՝ խոստանալով բանակցություններ վարել Իրանի հետ դրանց վերանայման շուրջ: Թրամփի հայտարարությունները տեղ գտան նաև եվրոպական երկրների արտաքին քաղաքական պատասխանատուների հայտարարություններում: ԵՄ արտաքին հարցերով գլխավոր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, մեկնաբանելով դրանք, ասել է, որ միջուկային համաձայնագիրը ԱՄՆ-ի և Իրանի միջև երկկողմ համաձայնագիր չէ, այլ բազմակողմ փաստաթուղթ, ուստի ԱՄՆ-ը չի կարող այն միակողմանիորեն չեղյալ համարել: Կարծում ենք, որ ԱՄՆ եվրոպական գործընկերներին հաջողվել է դիվանագիտական խողովակներով ճնշում գործադրել Թրամփի վրա այս հարցում, ինչի մասին է վկայում հարցի վերաբերյալ որոշակի լռությունն արդեն ընտրվելուց հետո: Կարծես թե ԱՄՆ նոր նախագահին Իրանի նկատմամբ կոշտ քաղաքականությունից հետ պահելու գործում առաջ է անցնում Մեծ Բրիտանիան: Վերջինս, մի կողմից, զարգացնում է կապերն ու ընդլայնում երկխոսությունն Իրանի հետ, մյուս կողմից՝ փորձում է հետ պահել Վաշինգտոնին ծայրահեղ քայլերից: Միացյալ Թագավորության արտաքին գերատեսչության ղեկավար Բորիս Ջոնսոնը հայտարարել է, որ կաշխատի ԱՄՆ նոր վարչակազմի հետ այս ուղղությամբ: Նշենք, որ Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն անմիջապես կապ ունի երկրի տնտեսական շահերի հետ: Վերջին ամիսներին բրիտանական նավթային ընկերություններն ակտիվացել են Իրանում՝ ձեռք բերելով այստեղ մեծ չափով ներդրումներ կատարելու պայմանավորվածություններ:

Մյուս կողմից՝ դեռևս նախագահի պաշտոնում գտնվող Բարաք Օբաման շարունակում է Իրանի նկատմամբ պատժամիջոցների երկարաձգման ու խստացման քաղաքականությունը: Նոյեմբերի 4-ին ԱՄՆ նախագահը ևս մեկ տարով երկարաձգել է Իրանի նկատմամբ ԱՄՆ միակողմանի պատժամիջոցների ժամկետը: Խոսքը 1979թ. նոյեմբերի 14-ին ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերի կողմից Իրանի հետ հարաբերություններում արտակարգ դրություն մտցնելու մասին է՝ դա կապելով Իրանում հեղափոխության արդյունքում

ԱՄՆ ազգային անվտանգությանը, արտաքին քաղաքականությանը և տնտեսությանը Իրանից սպառնացող վտանգով: Ավելի ուշ՝ նոյեմբերի կեսին, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն ընդունեց օրինագիծ, որով արգելվում է ամերիկյան ընկերություններին օդանավեր վաճառել Իրանին:

Տեղեկանք: Ամերիկյան «Բոինգ» ընկերության հետ Իրանը ձեռք է բերել 100 նոր ինքնաթիռ գնելու պայմանավորվածություն, գործարքի արժեքը կազմում է մոտավորապես $25 մլրդ: Նշենք նաև, որ այս հարցն Իրանի համար ունի անվտանգային նշանակություն. ներկայում Իրանում հաշվառված 250 քաղաքացիական օդանավերից 230-ը ենթակա են վերանորոգման կամ դուրսգրման:

Կարծես թե այլևս հիմնականում անցյալում են Իրանի նկատմամբ պատժամիջոցները եվրոպական երկրների կողմից: Իրանում Մեծ Բրիտանիայի նորանշանակ դեսպան Նիկոլաս Հոփթոնը նախագահ Ռոհանիին հավատարմագրերը հանձնելիս նշել է, որ երկու երկրների միջև հարաբերություններում նոր փուլի մեկնարկ է տրվում: Վերջինս ասել է նաև, որ բրիտանական բանկերը և ընկերությունները շահագրգռված են Իրանի հետ կապերի ամրապնդմամբ, և մոտ ապագայում նախատեսվում է այս հարցով երկխոսության նոր փուլի մեկնարկ:

Նոյեմբերի 8-ին Իրանի արտաքին գործերի նախարար Զարիֆը 30 հոգուց բաղկացած գործարար պատվիրակության հետ միասին սկսեց արևելաեվրոպական շրջագայությունը՝ մեկնարկելով Ռումինիայից: Ռումինացի գործընկեր Լազար Կոմանեսկուի հետ հանդիպման ընթացքում ստորագրվել է երկու պայմանագիր՝ երկկողմ քաղաքական խորհրդակցությունների և մի խումբ քաղաքացիների համար վիզային ռեժիմի փոփոխության վերաբերյալ: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել ավելացնել երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները՝ ներկա 250 մլն եվրոյի փոխարեն հասցնելով 1 մլրդ եվրոյի: Պաշտոնյաները համաձայնություն են ձեռք բերել նաև Իրանում համատեղ 1500 մեգավատ հզորությամբ էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ, որի ծախսերի 70%-ը կատարելու է ռումինական կողմը: Զարիֆի հաջորդ կանգառը Սլովակիայում էր: Այստեղ նա հանդիպումներ է ունեցել երկրի նախագահի և արտաքին գործերի նախարարի հետ: Վերջինիս հետ հանդիպման ընթացքում ստորագրվել է երկկողմ փոխհարաբերություններում փոխըմբռնման հուշագիր: Օրակարգի մյուս հիմնական թեման երկ-

կողմ միջպետական տնտեսական հանձնաժողովի ձևավորման հարցն էր: Զարիֆը շրջայցը եզրափակեց Չեխիա այցելությամբ, որտեղ իր գործընկերոջ հետ հանդիպման ժամանակ հիմնականում քննարկել է միջուկային համաձայնագրերին և ահաբեկչության դեմ համատեղ պայքարին առնչվող հարցեր:

Իրան-Ռուսաստանի Դաշնություն. Ռուսաստանի Դաշնության հետ Իրանի հարաբերություններն աստիճանաբար ռազմավարական երանգներ են ստանում: Մասնավորապես՝ կողմերն արդեն հայտարարել են 2017թ. $15 մլրդ չափով Իրանին զենքի վաճառքի վերաբերյալ, ընդ որում՝ պաշտոնական մակարդակով հայտարարվում է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման մասին: Ուստի, չի բացառվում, որ խոսք կարող է լինել նաև ռուսական Ս-400 հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերման մասին: Ռազմավարական համագործակցությունն աստիճանաբար ամրապնդվում է նաև տնտեսական չափիչներով. երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները 2016թ. առաջին 9 ամիսների ընթացում կազմել են $1,6 մլրդ, ինչը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը շուրջ 80%-ով:

Նոյեմբերի 14-ին երկօրյա պաշտոնական այցով Թեհրան ժամանեց Ռուսաստանի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն, որը ղեկավարում էր տնտեսական և քաղաքական ոլորտների ռուս բարձրաստիճան ղեկավարների պատվիրակությունը: Վերջինս հանդիպումներ է ունեցել Իրանի քաղաքական բարձրաստիճան ղեկավարության մի շարք ներկայացուցիչների հետ: Արտգործնախարար Զարիֆի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ինչպես քաղաքական կարգավորման, այնպես էլ տնտեսական, մասնավորապես՝ տրանսպորտային հաղորդակցության ուղիների բարելավման, այդ թվում՝ Հյուսիս-Հարավ միջանցքի, էներգետիկ ոլորտում համագործակցության վերաբերյալ հարցեր: Նախագահ Ռոհանին ռուս պաշտոնյայի հետ հանդիպման ժամանակ նշել է, որ Իրան-ՌԴ հարաբերությունները մտնում են ռազմավարական համագործակցության փուլ: Կողմերը քննարկել են ահաբեկչության դեմ պայքարում միասնական գործողություններին, տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանն ուղղված քայլերին առնչվող հարցեր: Նախագահի հետ հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում Վ.Մատվիենկոն հայտարարել է, որ առաջիկայում կմեկնարկեն Իրանի և Եվրասիական տնտեսական միության միջև բանակցությունները

համագործակցության շուրջ, իսկ 2017թ. կստորագրվի կազմակերպության և Իրանի միջև ազատ առևտրային ռեժիմի հաստատման համաձայնագիր: Սա կարող է լավ խթան հանդիսանալ նաև Իրան-Հայաստան տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Ռուս պաշտոնյան նշել է նաև, որ 2017թ. կակտիվանան Իրանի և Շանհայի համագործակցության կազմակերպության միջև գործակցության ընդլայնման բանակցությունները:

Իրանի արտաքին քաղաքականության օրակարգային այլ ուղղություններ. Իրանը փորձում է տնտեսական խոշոր գործընկերների հետ հարաբերություններում նոր որակական փոփոխություններ մտցնել՝ ավելացնելով քաղաքական համագործակցության ձևաչափեր: Նախագահ Ռոհանին Թեհրանում ընդունել է Չինաստանի պաշտպանության նախարար Չան Վանցյուանին: Վերջինս շեշտադրել է, որ Չինաստանը տարածաշրջանում իր քաղաքականությունն իրականացնելիս հենվում է նաև Իրանի վրա՝ որպես այստեղ առաջին ուժ: Պաշտոնյաները քննարկել են ահաբեկչության դեմ պայքարում համատեղ քայլերի իրականացման հարցեր:

Թուրքիայի հետ հարաբերություններում թեպետ առերես լուրջ տարաձայնություններ չեղան, սակայն դժվար է դրանք կայուն գնահատել: Ակնհայտ է, որ տարածաշրջանում ազդեցության համար պայքարող երկու պետություններն ունեն բազմաթիվ քաղաքական հարցեր, սակայն փորձում են դրանք մեղմել տնտեսական գործակցությամբ: Այս մասին նշել է նաև Իրանի նախագահ Ռոհանին նոյեմբերի 25-ին Թեհրանում Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուի հետ հանդիպման ժամանակ: Իրանի նախագահը նշել է, որ, թեպետ երկու երկրների դիրքորոշումներում կա որոշակի տարակարծություն Իրաքի և Սիրիայի հարցերում, սակայն միմյանց միջև հարաբերությունները բարեկամական են, իսկ տնտեսական կապերը կողմերի միջև շարունակ զարգանում են: Սակայն չենք կարծում, որ տնտեսական հարաբերություններում ամեն ինչ հարթ է ընթանում: Մասնավորապես՝ կան բազմաթիվ խնդիրներ Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական ապրանքների և հակառակ ուղղությամբ տարանցման հարցերում: Առաջին ամենամեծ խնդիրն այն է, որ Թուրքիայով անցնող ճանապարհն անվտանգ չէ երկրում տիրող ներքաղաքական իրավիճակի պատճառով, Թուրքիան մշտապես նոր պայմաններ է առաջադրում տարանցման համար վճարվող տուրքերի մասով, և, վերջապես, վերջինիս կողմից լրացուցիչ խոչընդոտներ են

ստեղծվում սահմանային հսկման անցակետերում՝ առաջացնելով այնտեղ մինչև 15 կիլոմետրի հասնող բեռնատարների հերթեր: Այդ պատճառով Իրանն ակտիվորեն աշխատում է տարանցման այլընտրանքների որոնման ուղղությամբ: Նոյեմբերին փորձարկվեց արդեն Եվրոպա-Սև ծով-Վրաստան-Հայաստան-Իրան տարանցիկ ճանապարհը՝ Գերմանիայից Իրան հասցնելով երկու կոնտեյներ: Ընդ որում՝ այս ճանապարհով ծախսերը 1-2% ավելի էժան ստացվեցին, իսկ ճանապարհը շատ ավելի անվտանգ է թուրքական երթուղուց: Իրանն ակտիվորեն փորձում է զարգացնել նաև Հնդկաստան-Ռուսաստան ցամաքային առևտրային ուղին, որն անցնելու է Իրանի և Ադրբեջանի տարածքով: Ներկա ենթակառուցվածքների պայմաններում այդ երթուղով ապրանքափոխադրումը տևում է 22 օր, մինչդեռ դրանց արդիականացման և երկաթգծի շինարարության պարագայում ժամանակահատվածն էապես կկրճատվի:

Նոյեմբերին հետագա համագործակցության լավ հիմքեր դրվեցին իսլամական աշխարհի երկրներից Օմանի հետ: Կողմերը պայմանավորվել են երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները մոտ ապագայում հասցնել $5 մլրդ-ի՝ ներկայիս $1 մլրդ-ի փոխարեն: Նախատեսվում է կառուցել Իրան-Օման օրական մինչև 28 մլն մ^3 թողունակությամբ գազատար, իսկ իրանական գազն Օմանում կհեղուկացվի և կարտահանվի: Իրանն ավելացրել է նաև նավթի արտահանման ծավալները՝ դրանք հասցնելով 2,44 մլրդ բարելի: Իրանական նավթի հիմնական մասի՝ ավելի քան 60%-ի գնորդները շարունակում են մնալ ասիական երկրները:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. նոյեմբեր

Անուշավան Բարսեղյան[*]

Հոդվածում ներկայացրել ենք 2016թ. նոյեմբերին Ադրբեջանի արտաքին հարաբերությունների առավել ուշագրավ զարգացումները և հիմնական միտումներն ըստ երկրների:

Ադրբեջան-Իրան. Ինչպես բազմիցս նշել ենք, Ադրբեջանի և Իրանի հետպատժամիջոցային ժամանակահատվածի համագործակցության հիմնական ուղղություններից մեկը տրանսպորտային ոլորտն է: Այստեղ իր ուրույն դերն ունի երկաթուղային հաղորդակցությունը, որի անկյունաքարային ծրագրերից է իրանական Կազվին-Ռեշտ-Աստարա երկաթուղային հատվածի միացումն ադրբեջանական Աստարա կայարանին: Եթե Ադրբեջանն ավարտին է հասցրել ադրբեջանական Աստարա երկաթուղային կայարանից մինչև Իրանի սահման ընկած 8.3 կմ-անոց հատվածի միակողմանի երկաթուղու շինարարությունը և նույնիսկ փորձարկել այն, ապա Կազվին-Ռեշտ-Աստարա երկաթգծի ֆինանսավորման հարցը դեռևս հստակեցված չէ: Այս նախագծում պաշտոնական Բաքուն, հետապնդելով ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական շահեր, իրանական հատվածի շինարարության ավարտի համար պատրաստ է Իրանին տրամադրել $500 մլն վարկ: Սակայն Թեհրանը, քաղաքական և տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, չի շտապում օգտվել ադրբեջանական առաջարկից և փորձում է ներդրումներ ներգրավել նախագծով հետաքրքրված երկրներից: Այդ նպատակով ներկայումս բանակցություններ են վարվում Չինաստանի հետ, ինչը, ԻԻՀ Ճանապարհների և քաղաքաշինության փոխնախարար Մ.Աղայիի հավաստմամբ, շինարարությունն արագացնելու տարբերակներից մեկն է:

Նշված հատվածի շինարարության ակտիվացման համար կարող է խթանիչ գործոն հանդիսանալ նաև «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային մի-

[*] «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

ջանցքով[1] բեռնափոխադրումներ իրականացնելու մասին Իրանի, Ադրբեջանի, Ռուսաստանի և Հնդկաստանի պայմանավորվածությունը: Սա կարևոր փաստարկ է Թեհրանի համար, քանզի միայն ՌԴ-ին երկաթուղով միանալը տնտեսապես չի կարող արդարացնել Իրանի կողմից հնարավոր ներդրումները[2]:

Ադրբեջանը և Իրանը, ելնելով ներկա տնտեսական առաջնահերթություններից, շահագրգռված են նաև գործարար կապերի ամրապնդմամբ և զարգացմամբ: Նավթի գների անկման պայմաններում երկու երկրների համար էլ հրամայական է դարձել տնտեսության ոչ նավթային ոլորտների զարգացումը: Այդպիսի կապերի զարգացման նպատակ են հետապնդում ս.թ. դեկտեմբերին Իրանի Արդեբիլ և Թավրիզ քաղաքներում նախատեսվող ադրբեջանա-իրանական բիզնես ֆորումները:

Ըստ Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան Մ.Պակայինի, տնտեսական հարաբերությունների զարգացմանը, մասնավորապես՝ ապրանքաշրջանառության ծավալների աճին խոչընդոտում է երկու երկրների մաքսային տարբեր քաղաքականությունների հանգամանքը: Հարկ է նշել, որ Ադրբեջանի մաքսային ծառայության տվյալների համաձայն, ս.թ հունվար-սեպտեմբեր ամիսներին Իրանի հետ առևտրաշրջանառությունը կազմել է $137,65 մլն, որից $102 մլն-ը կազմում են ներկրումներն Իրանից:

Դեռևս չլուծված է մնում Իրանի և Ադրբեջանի միջև առանց վիզային ռեժիմ հաստատելու հարցը: ԻԻՀ ԱԳՆ մամլո քարտուղար Բ.Հասեմիի հայտարարության համաձայն, Իրանը կողմ է այդ ուղղությամբ հետագա քայլերի ձեռնարկմանը և լիահույս է, որ երկու երկրների միջև ներկա փոխհարաբերությունների բարձր մակարդակը թույլ կտա հասնել վիզաների չեղարկման մասին համաձայնության: Սակայն, ինչպես նշել է ԻԻՀ ԱԳՆ հյուպատոսական հարցերով փոխնախարար Հ.Հաշգավին, ի տարբերություն Իրանի, որը միակողմանիորեն վերացրել է Ադրբեջանի քաղաքացիների համար վիզային ռեժիմը, Ադրբեջանը խոստանում է միայն որոշակի զիջումներ անել ԻԻՀ քաղաքացիների համար:

[1] Կառուցվող Աստարա-Ռեշտ տրանսպորտային միջանցքը կմիացնի Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի երկաթուղիները: Նախագիծն իրականացվում է «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում:

[2] Իրանը Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառությունը հաջողությամբ իրականացնում է Կասպից ծովով, որը հատկապես վերջին ժամանակներում առանձնապես ծանրաբեռնված չէ:

Եթե նախկինում Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների խորացումը պարբերաբար հրապարակային դժգոհություններ էր առաջացնում Իրանում, ապա ԻԻՀ-ԱՀ հարաբերությունների ջերմացումը կարծես սկսել է անհանգստություն պատճառել արդեն Իսրայելին և նրա հետ կապված ադրբեջանական քաղաքական խմբերին: Դրա մասին են վկայում ԱՀ Միլի մեջլիսի պատգամավոր, իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցության անդամ, Ադրբեջան-Իսրայել միջխորհրդարանական աշխատանքային խմբի ղեկավար Եվդա Աբրամովի պարբերական բնույթ ստացող հակահիրանական հայտարարությունները[3]: Վերջինս նշել է, որ ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ ֆինանսավորվում են ԱՀ-ում Իրանի դեսպանության և ԻԻՀ ղեկավար շրջանակների կողմից և չեն սպասարկում Ադրբեջանի ազգային շահերը: Իրանական ներգրավվածությունն Ադրբեջանի մեդիա դաշտում, ըստ Ե.Աբրամովի, մեծ դժգոհություն և արդեն անհանգստություն է առաջացնում Իսրայելում:

Ադրբեջան-Ռուսաստան. Երկու երկրների փոխհարաբերություններում էական դերակատարում ունի ռազմական համագործակցությունը, որի ընդլայնման անհրաժեշտության մասին է խոսել ՌԴ ՊՆ նախարար Ս.Շոյգուն ԱՀ իր պաշտոնակցի հետ այս ամիս կայացած հանդիպման ընթացքում: Ս.Շոյգուն ընդգծել է 2016թ. ծրագրերի կատարման և միջազգային ահաբեկչության դեմ պայքարում համագործակցության հանգամանքները և վերահաստատել բոլոր մակարդակներով ռազմական համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը: ՌԴ ՊՆ նախարարը, Ադրբեջանը համարելով Կասպից ծովում անվտանգության ապահովման ֆորպոստ, անհրաժեշտ է համարել բարձրացնել համագործակցության արդյունավետությունը, ինչը կարող է էականորեն ազդել տարածաշրջանի կայունության ապահովման վրա:

Ադրբեջանցի քաղաքական փորձագետները ՌԴ-ի հետ ռազմական համագործակցությունը դիտում են որպես հիմնական միջոցներից մեկը Հայաստանի կողմից «Իսկանդեր-Մ» հրթիռային կայանների ձեռքբերումից հետո ստեղծված իրավիճակը չեզոքացնելու համար: Այս ուղղությամբ ռուսական կողմից ակնկալվում է մեծ զեղչերի տրամադրում սպառազինության գնման համար և աջակցություն սեփական ռազմարդյունաբերությունը զարգացնելու հարցում:

[3] Տե՛ս Ադրբեջանը 2016թ. հոկտեմբերին (արտաքին հարաբերություններ), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15205

Երկու երկրների տնտեսական կապերի խթանմանն էր ուղղված Բաքվում կայացած 7-րդ ռուս-ադրբեջանական միջտարածաշրջանային ֆորումը, որին մասնակցել են պաշտոնական և գործարար շրջանակներ: Բացի լիագումար նիստից, անցկացվել են մի շարք թեմատիկ կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են արդյունաբերության, զբոսաշրջության, ագրարային և հումանիտար ոլորտներում համագործակցության հարցեր: Ստորագրվել են հումանիտար և տնտեսական ոլորտներում համագործակցության փաստաթղթեր: ԱՀ էկոնոմիկայի նախարարն իր ելույթում նշել է, որ ՌԴ-ն ԱՀ տնտեսությունում ներդրել է $3 մլրդ, իսկ ԱՀ-ը ՌԴ-ում $1 մլրդ:

Հարկ է նշել, որ ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով Ադրբեջանը մտադիր է ՌԴ-ում ԱՀ դեսպանատանը հիմնել նաև առևտրային ներկայացուցչություն[4]:

Ադրբեջան-Պակիստան. Ադրբեջանի և Պակիստանի դեպքում նույնպես ռազմական համագործակցությունն առաջնային նշանակություն ունի կողմերի համար: Ադրբեջանի ՊՆ պատվիրակության Պակիստան կատարած այցի ընթացքում ստորագրվել է երկկողմանի ռազմական համագործակցության պլան ԱՀ ՊՆ և Պակիստանի Միացյալ շտաբի միջև: Պայմանագրի բովանդակությունը չի հրապարակվում, սակայն ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն, քննարկվում է Ադրբեջանի կողմից մեծ քանակությամբ սպառազինության գնման հարցը:

Ինչպես նշել է Պակիստանի ՌՕՈՒ մարշալ Էրշադ Մալիկը, Ադրբեջանը հետաքրքրություն է ցուցաբերում Բաքվում անցկացված *ADEX-2016* միջազգային ռազմական ցուցահանդեսի ընթացքում ցուցադրված պակիստանյան *Pakistan Aeronautikal Complex (PAC)* ընկերության արտադրած ուսումնական *«Super Mushshak»* և մարտական OA-17 *«Thunder»* ինքնաթիռների նկատմամբ: Ըստ նրա, Պակիստանը պատրաստ է բավարարել ԱՀ ՌՕՈՒ պահանջարկը:

Ադրբեջանական լրատվամիջոցների համաձայն, ԱՀ-ը բանակցություններ է վարում նաև Պակիստանից JF-17 *«Thunder»* կործանիչներ և դրա համար օդաչուներ պատրաստելու մարզասարքեր, ինչպես նաև 500 կմ հեռահարությամբ օպերատիվ-մարտավարական հրթիռային համակարգեր գնելու ուղղությամբ: Ինչպես նշել է ԱՀ ԶՈՒ հրթիռային և հրետանային զորքերի հրամա-

[4] Բացի ՌԴ-ից, այդպիսի ներկայացուցչություններ կգործեն Չինաստանում և ԱՄԷ-ում ԱՀ դեսպանություններում:

նատար Զ.Հուսեյնովը, հուսալի պաշտպանություն ապահովելու համար Ադրբեջանը կարիք ունի 200 կմ, 300 կմ և 500 կմ հեռահարությամբ օպերատիվ-մարտավարական հրթիռների, և այս հարցում Պակիստանը միակ երկիրը չէ, որի հետ բանակցություններ են վարվում դրանք գնելու և տեղում 500 կմ հեռահարությամբ բալիստիկ հրթիռների արտադրություն կազմակերպելու նպատակով:

Չնայած երկու երկրների եղբայրական հարաբերություններին, ցածր է մնում տնտեսական համագործակցության մակարդակը. վերջին 5 տարիների ընթացքում առևտրաշրջանառությունը տատանվում է տարեկան $17-25 մլն-ի սահմաններում: Իրավիճակը շտկելու նպատակով Պակիստանի պաշտպանության և առևտրի նախարարությունները համատեղ ծրագիր են մշակել դեպի Ադրբեջան արտահանումը մինչև $500 մլն-ի հասցնելու համար: Պակիստանյան երկու նախարարությունների համատեղ որոշումը, որն, ի դեպ, նախատեսված է 5 տարվա համար, ադրբեջանական մամուլը ներկայացրել է որպես Պակիստանի կողմից Ադրբեջանին $500 մլն-ի սպառազինություն վաճառելու որոշում:

Բացի դրանից, կողմերը մտադիր են մոտակա ժամանակերն անցկացնել բիզնես ֆորում երկու երկրների գործարարների մասնակցությամբ ԱՀ արտահանման և ներդրումների աջակցության հիմնադրամի (*Azpromo*) և ԱՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ: Ֆորումին կմասնակցեն պակիստանյան ընկերություններ, որոնք գործում են շինարարության, թռչնաբուծության, դեղագործության, լոգիստիկայի, ինչպես նաև սպորտային ապրանքների, վիրաբուժական սարքավորումների, հագուստի, թանկարժեք քարերի և կոսմետիկայի արտադրության ոլորտներում:

Բարձր մակարդակով խոսվում է նաև Բաքու-Իսլամաբադ ուղիղ ավիաչվերթի իրականացման հնարավորության մասին:

Ադրբեջան-ԵՄ. ԵՄ Խորհուրդը լիազորել է Եվրահանձնաժողովին և ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցչին բանակցել ԵՄ-ի և ԱՀ-ի միջև նոր համաձայնագիր կնքելու ուղղությամբ, որը կփոխարինի 1996թ. գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրին:

Պաշտոնական Բաքուն, ի դեմս ԱՀ ԱԳՆ մամլո խոսնակ Հ.Հաջիևի, ողջունել է ԵՄ Խորհրդի որոշումը և համոզմունք հայտնել, որ նոր համաձայնագիրը Ադրբեջանի և ԵՄ հարաբերությունները կբարձրացնի նոր մակարդակի:

ԱՀ-ում ԵՄ ներկայացուցչության ղեկավար Մ.Մարդը ԵՄ անունից ցանկություն է հայտնել ընդլայնել Ադրբեջանի հետ համագործակցությունը տրանսպորտային ոլորտում: Այս և այլ նմանատիպ հարցերը կողմերը կքննարկեն ԱՀ-ի և ԵՄ-ի միջև էներգետիկայի ենթահանձնաժողովի ս.թ. դեկտեմբերին կայանալիք նիստում:

Միաժամանակ, *«Eastern Partnership Visa Liberalisation Index»* նախագծի փորձագետները խոստովանել են, որ Ադրբեջանի և ԵՄ-ի միջև ընթանում են անվիզա ռեժիմի բանակցություններ: Սակայն այդ փորձագետների հավաստմամբ, ի տարբերություն Ուկրաինայի, Ադրբեջանը չի կատարել անվիզա ռեժիմ ստանալուն անհրաժեշտ պայմանները:

Ադրբեջան-Չինաստան. Վերջին տարիներին Ադրբեջանը տնտեսական ակտիվություն է հանդես բերում ասիական շուկայում՝ առաջին հերթին զարգացնելով տնտեսական կապերը Չինաստանի հետ: Մասնավորապես, 2015թ. ընթացքում Չինաստանն առաջին անգամ հայտնվել է Ադրբեջանի հետ առավել մեծ առևտրաշրջանառություն ունեցող երկրների տասնյակում (2015թ. երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը կազմել է $565 մլն, որը ԱՀ ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության 2,74%-ն է):

Ադրբեջանը նաև ձգտում է մեծացնել ասիական շուկա արտահանվող նավթի ծավալները: Միջազգային ֆինանսական վերլուծություններով զբաղվող *«Eikon»* ընկերության տվյալների համաձայն, ս.թ. հոկտեմբերին Ադրբեջանը Չինաստան, Թաիլանդ և Հնդկաստան է արտահանել 7 մլն բարել նավթ, որն առավելագույնն է 2015թ. հունվարից ի վեր (ցուցիչների արձանագրման սկիզբը): *«Forbes»* պարբերականի հավաստմամբ, եթե *OPEC*-ը որոշում ընդունի նավթի արդյունահանման կրճատման մասին, ապա այդ կազմակերպության անդամ չհանդիսացող երկրները, ինչպես Ադրբեջանը, կարող են լրացնել այդ բացն ասիական շուկայում:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. նոյեմբեր

Հայկ Գաբրիելյան[*]

Ռուսաստան. Նոյեմբերին Թուրքիայի խորհրդարանի միջազգային հարցերով հանձնաժողովը հավանության արժանացրեց «Թուրքական հոսք» գազատարի կառուցման մասին Ռուսաստանի հետ կնքված միջկառավարական համաձայնագրի վավերացման մասին օրինագիծը: Ռուսաստանի և Թուրքիայի զինված ուժերի (ԹԶՈՒ) գլխավոր շտաբների (ԳՇ) պետեր Վալերի Գերասիմովն ու Հուլուսի Աքարը հանդիպեցին Մոսկվայում և քննարկեցին Սիրիայի հակամարտության կարգավորման հարցում փոխգործակցությունը: Ավելի ուշ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության ղեկավար Իսմայիլ Դեմիրը հայտարարեց, որ Թուրքիան մեծ հեռահարության հակահրթիռային պաշտպանության համակարգը զարգացնելու համար պատրաստ է համագործակցել Ռուսաստանի հետ: Թուրքիայի պաշտպանության նախարար Ֆիքրի Ըշըքը հայտարարեց, որ Անկարան S-400 զենիթահրթիռային համալիրների գնման շուրջ բանակցում է Մոսկվայի հետ:

Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, որ պատրաստ է անձամբ հանդիպել (Թուրքիայի կողմից խոցված) «Սու-24»-ի զոհված օդաչու Օլեգ Պեշկովի այրու՝ Ելենա Պեշկովայի հետ, ներողություն խնդրել և ցավակցել, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերել: Պեշկովան հայտարարեց, որ պատրաստ է հանդիպել Չավուշօղլուի հետ: Հետաքրքիր է, որ Չավուշօղլուն պատրաստ էր ներողություն խնդրել Սիրիայի թուրքմենների արարքի (Պեշկովին սպանելու) համար: Նոյեմբերին Բինալի Յըլդըրըմը դատապարտեց ռուսական քարոզչությանը հակազդելու մասին նոյեմբերի 23-ին Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևը: Բնականաբար, Թուրքիայի այս պահվածքը կապված էր ԵՄ-ի հետ հարաբե-

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:

րությունների վատթարացման և Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հետ:

Ուկրաինայի Գերագույն ռադայի ղեկավար Անդրեյ Պարուբին Էրդողանի հետ հանդիպման ժամանակ բարձրացրեց Սևաստոպոլ թուրքական նավերի մուտքի հարցը: Էրդողանը Պարուբիին հայտնեց, որ կտա անհրաժեշտ ցուցումներ, որպեսզի այսուհետ նման բան չկրկնվի յուրաքանչյուր ձևաչափով: Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Ուկրաինայի հանդեպ Թուրքիայի քաղաքականությունում չկա որևէ փոփոխություն. «Անկարան նախկինի նման աջակցում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը, որի մի մասը Ղրիմն է: Թուրքիայի ոչ պաշտոնական պատվիրակությունը բանակցելու նպատակով Ղրիմ է այցելել սեփական նախաձեռնությամբ»: Սա վկայում է Ուկրաինայի հանդեպ Թուրքիայի երկդիմի քաղաքականության մասին, որին ականատես ենք եղել նաև Վրաստանի (Աբխազիա) և Չինաստանի (Սինձզյան-Ույղուրյան մարզ) հանդեպ Թուրքիայի քաղաքականությունում, երբ նա պաշտոնապես ճանաչում է այդ երկրների տարածքային ամբողջականությունը, սակայն ոչ պաշտոնապես գործում է դրան հակառակ ձևով:

Նոյեմբերի 25-ին Ռուսաստանի և Թուրքիայի նախագահները հեռախոսազրույց ունեցան: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ թուրքական կողմի պնդմամբ՝ Ասադի ավիացիան նոյեմբերի 24-ին (թուրքական օդուժի կողմից ռուսական «Սու-24»-ը խոցելուց ուղիղ մեկ տարի անց) Սիրիայի հյուսիսում հարձակում իրականացրեց թուրք զինվորականների վրա՝ սպանելով նրանցից 3-ին և վիրավորելով 10-ին: Հեռախոսազրույցի ժամանակ Պուտինն ու Էրդողանը քննարկեցին նաև Հալեպ մարդասիրական օգնություն հասցնելու և Սիրիայում իրավիճակի վերջնական կարգավորման հարցերը: Ընդհանուր առմամբ, Պուտինն ու Էրդողանը 23 ժամում երկու անգամ քննարկեցին Սիրիայի հարցը: Նրանց երրորդ հեռախոսազրույցը տեղի ունեցավ, երբ Էրդողանը հայտարարեց, թե Թուրքիան Սիրիա է մտել Ասադին տապալելու համար: Պուտինի հետ հեռախոսազրույցից հետո Էրդողանը հարկադրված եղավ հետ կանգնել իր խոսքերից և հայտնվել անհարմար իրավիճակում:

Չավուշօղլուն հայտարարեց, որ ժամանակն է փակել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների ճգնաժամային էջը, չեղյալ հայտարարել

առևտրային ու վիզային բոլոր սահմանափակումները և մտածել ռազմավարական ապագա հարաբերությունների մասին. «Երկու երկրները գլխավոր դասը քաղել են ճգնաժամից, այն է՝ թե միմյանց համար որքան կարևոր են Ռուսաստանն ու Թուրքիան, որոնց տնտեսությունները փոխադարձաբար լրացնում են միմյանց»:

ԱՄՆ. Նոյեմբերին Չավուշօղլուն հայտարարեց, որ Անկարայի ու Վաշինգտոնի միջև հարաբերությունները կախված են իսլամական քարոզիչ Ֆեթուլա Գյուլենին Թուրքիայի իշխանություններին հանձնելու ԱՄՆ ցանկությունից. «Գյուլենի վերադարձն ունի շատ կարևոր նշանակություն: Այժմ մեր ժողովրդի շրջանում ԱՄՆ իմիջը բացասական է: Քանի դեռ Գյուլենը չի արտահանձնվել Թուրքիային, մեր ժողովրդի վերաբերմունքն ԱՄՆ-ի հանդեպ կմնա անփոփոխ»: Նոյեմբերին Սպիտակ տունը խոր մտահոգություն հայտնեց Թուրքիայում քրդամետ, Ժողովուրդների դեմոկրատիա» կուսակցության (ԺԴԿ) պատգամավորների ձերբակալվելու կապակցությամբ:

Էրդողանը հայտարարեց, որ ԱՄՆ նախագահական ընտրություններում Դոնալդ Թրամփի հաղթանակով Ամերիկայում սկսվում է նոր ժամանակաշրջան: Նա զանգահարեց և շնորհավորեց Դոնալդ Թրամփին՝ ԱՄՆ 45-րդ նախագահ դառնալու կապակցությամբ: Էրդողանը Թրամփին հորդորել է առաջին պաշտոնական այցը կատարել Թուրքիա՝ ընդգծելով, որ Թուրքիայի և ԱՄՆ հարաբերություններն ունեն ռազմավարական բնույթ, և ինքը չի հավատում Թրամփի ագրեսիվ քաղաքականությանն ընդդեմ մուսուլմանների:

Բինալի Յըլդըրըմը նույնպես հեռախոսազրույցի ժամանակ շնորհավորեց Թրամփին և կոչ արեց շուտափույթ արտահանձնել Գյուլենին՝ նշելով, որ դրանով Վաշինգտոնի ու Անկարայի հարաբերություններում կբացվի նոր էջ: Թուրքիայի նախագահի մամլո քարտուղար Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ ԱՄՆ-ն իր տարածաշրջանային քաղաքականությունում պետք է հաշվի առնի Թուրքիայի ռազմավարական կարևորությունը:

Թուրքական մամուլի պնդմամբ՝ յուրաքանչյուր երկրի դեպքում Թրամփը շփվել է մեկ առաջնորդի հետ և միայն Թուրքիայի պարագայում է, որ նա հեռախոսազրույց է ունեցել երկու առաջնորդի հետ՝ Էրդողան և Յըլդըրըմ: Նոյեմբերին Էրդողանը հայտարարեց, որ դեկտեմբերին մեկնելու է Չիկագո՝ ներկա գտնվելու ԱՄՆ մուսուլմանների ամենամյա հանդիպմանը և չբացառեց, որ այցի ընթացքում կարող է հանդիպել Թրամփի հետ:

Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը հայտարարեց, որ Անկարան հույսեր է կապում Թրամփի երդմնակալությունից հետո Գյուլենի արտահանձնման և ԱՄՆ-ի կողմից Սիրիայի քրդերի հետ համագործակցությունը դադարեցնելու հետ: Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ Անկարան վճռականորեն է տրամադրված *PYD* զինյալներին Մանբիջից Եփրատ գետի արևելյան ափը մղելու հարցում, ինչպես որ խոստացել էր ԱՄՆ-ը:

Էրդողանն ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային և փոխնախագահ Ջո Բայդենին մեղադրեց Սիրիայի խնդիրների լուծմանն «անլուրջ մոտենալու» համար՝ ընդգծելով, որ հիասթափված է Սիրիայի հարցում ԱՄՆ դիրքորոշումից ու ցայժմ Գյուլենին չարտահանձնելուց: Թուրքիայի Եվրամիության հարցերով նախարար Օմեր Չելիքը Ֆեթհուլա Գյուլենին որակեց «ավելի վտանգավոր», քան Ուսամա բեն Լադենն ու ԻՊ-ը. «Ալ-Քաիդան ու ԻՊ-ը բաց խոսում են իրենց ահաբեկչական նպատակների մասին, մինչդեռ Գյուլենը քողարկվում է ազատություն, ժողովրդավարություն, երկխոսություն, հանդուրժողականություն հասկացությունների տակ»:

ԵՄ. Նոյեմբերին Էրդողանը հայտարարեց, որ ԵՄ-ը ցայժմ Թուրքիային չի փոխանցել 3 մլրդ եվրոն, որը պարտավորվել էր տրամադրել Անկարայի հետ կնքված միգրացիոն համաձայնագրով. «ԵՄ-ը մեզ խոստացել էր մինչև հուլիս տրամադրել 3 մլրդ եվրո, սակայն մենք ստացել ենք 200-250 մլն: ԵՄ-ը միգրացիոն խնդրով մտահոգվեց միայն այն բանից հետո, երբ Անկարան հայտարարեց, որ պատրաստ է փախստականների համար բացել ԵՄ-ի հետ սահմանները»: Չավուշօղլուն հայտարարեց, որ վիզային ռեժիմի ազատականացման հարցում Անկարայի համբերությունը մոտենում է ավարտին, և եթե ԵՄ-ը մինչև տարեվերջ քայլեր չձեռնարկի այդ ուղղությամբ, ապա Անկարան կդադարեցնի Բրյուսելի հետ պայմանավորվածությունները պահպանելը:

Սակայն Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերը հայտարարեց, որ Թուրքիայի քաղաքացիներին ոչ վիզային ռեժիմ հատկացնելուց ԵՄ հրաժարվելը կլինի ոչ թե եվրոպական իշխանությունների, այլ Էրդողանի սխալը. «Այդ դեպքում պարոն Էրդողանը հարկադրված կլինի թուրքերին բացատրել, թե ինչու նրանք չեն կարողանում ազատորեն շրջել Եվրոպայում: Մենք չենք կարող նահանջել մեր գլխավոր սկզբունքներից»:

ԵՄ դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին խոր մտահոգություն հայտնեց ԺԴԿ պատգամավորների կալանավորման համար՝ հարցը քննարկելով Չավուշօղլուի և Օմեր Չելիքի հետ: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը մտահոգություն հայտնեց *Cumhuriyet* թերթի աշխատակիցների ձերբակալության կապակցությամբ: Նա հայտարարեց, որ մամուլի ազատությունը կենտրոնական դեր է խաղալու ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցություններում: Թուրքիայում Գերմանիայի դեսպանն այցելեց *Cumhuriyet*-ի խմբագրություն, տվյալ իրավիճակը որակեց որպես մտահոգիչ, իսկ Թուրքիայի դեսպանն այդ կապակցությամբ կանչվեց Գերմանիայի ԱԳՆ:

Էրդողանն իր հերթին հայտարարեց, որ Գերմանիան երկար ժամանակ «աչք է փակել» ահաբեկչական կազմակերպությունների գործունեության վրա և «վերածվել» է մի երկրի, ուր ազատ զբոսնում են ահաբեկչական շարժումների կողմնակիցները: Չավուշօղլուն հայտարարեց, թե Գերմանիան «ամենաշատն է աջակցում» Թուրքիայի տարածքում գործող ահաբեկիչներին. «Մենք հարցում ենք ուղարկել Գերմանիա՝ պահանջելով հանձնել *PKK* 4000 անդամի, սակայն նրանք ոչ մեկին չեն արտահանձնել»:

Դրանից առաջ հայտնի էր դարձել, որ Թուրքիայում հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձից (ՌՀՓ) հետո Գերմանիայից քաղաքական ապաստան է խնդրել թուրքական դիվանագիտական անձնագրեր ունեցող 35 մարդ: Բացի այդ, թուրքական բանակի մի շարք զինծառայողներ, ովքեր ծառայություն են անցնում Ռամշտայն քաղաքում գտնվող ՆԱՏՕ ավիաբազայում, Գերմանիայի իշխանություններից քաղաքական ապաստան են խնդրել: Էրդողանը, սակայն, զգուշացրեց ՆԱՏՕ-ին՝ դաշինքում թուրք զինծառայողներին պաշտպանություն չտրամադրելու համար: 2016թ. Գերմանիայից ապաստան խնդրող Թուրքիայի քաղաքացիների թիվը զգալիորեն ավելացել է. մինչև 2016թ. սեպտեմբերն ապաստան ստանալու խնդրանքով դիմել է Թուրքիայի 3973 քաղաքացի, ինչը կրկնակի ավելի է 2015թ. Գերմանիային դիմած Թուրքիայի քաղաքացիների ընդհանուր թվից:

Եվրահանձնաժողովը հրապարակեց ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիայի պատրաստվածության մասին մոտ 100 էջանոց զեկույցը, որն ամենաբացասական զեկույցն է վերջին տարիների համար: Դրանում նշված էր, որ խոսքի ազատության, արդարադատության ոլորտներում վերջին մեկ

տարում գրանցվել է խիստ հետընթաց, որ Թուրքիան ընտրովի է կիրառում ազգային անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի մասին օրենքները: Զեկույցում լուրջ մտահոգություն էր հայտնվում ՌՀՓ-ից հետո մեծ թվով լրագրողների ձերբակալությունների և ԶԼՄ փակման առնչությամբ: Նուման Քուրթուլմուշը դատապարտեց այդ զեկույցը՝ այն որակելով «կանխակալ փաստաթուղթ»:

Թուրքական կողմը քննադատեց Լյուքսեմբուրգի արտգործնախարար Ժան Ասելբորնին, որը չէր բացառել, որ Էրդողանի վարած քաղաքականության պատճառով ԵՄ-ը կարող է տնտեսական պատժամիջոցներ սահմանել Թուրքիայի դեմ: Ի պատասխան՝ Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Հուսեին Մուֆթուօղլուն հայտարարեց, որ Լյուքսեմբուրգը «գլխավորում» է Եվրոպայում ահաբեկչությանն աջակցող երկրների ցուցակը: Մարտին Շուլցը նույնպես հայտարարեց, որ ԵՄ-ը կարող է տնտեսական պատժամիջոցներ սահմանել Թուրքիայի դեմ՝ կապված լրագրողների և ընդդիմադիր գործիչների ձերբակալությունների հետ: Նրա խոսքերով՝ Անկարան կանցնի կարմիր գիծը, եթե նորից մահապատիժ ներդնի: Չավուշօղլուն Շուլցին մեղադրեց «երկակի ստանդարտներ կիրառելու» մեջ:

Ավստրիայի արտգործնախարար Սեբաստիան Կուրցն առաջարկեց կասեցնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շուրջ բանակցությունները՝ ընդգծելով, որ Թուրքիան մարդու իրավունքների և օրենքների տեսանկյունից Եվրոպայից շատ է հեռացել: Ավստրիայի կառավարությունն ընդունեց քաղաքական 6 կուսակցությունների նախաձեռնությունը, որն առաջարկում է դադարեցնել զենքի մատակարարումն այն երկրներին, ուր առկա է ռազմական դրություն կամ ռազմական հեղաշրջման վտանգ:

Եվրախորհրդարանն ընդունեց ԵՄ-ին անդամակցելու շուրջ Թուրքիայի հետ բանակցային գործընթացը սառեցնելու մասին բանաձևը (479 կողմ, 37 դեմ, 107 ձեռնպահ): Թեպետ դա չուներ օրենքի ուժ, այնուամենայնիվ, ԵՄ-ին ու նրա անդամ երկրների ղեկավարությանը հասցեագրված կարևոր ուղերձ է: Էրդողանը հայտարարեց, որ Եվրախորհրդարանի ընդունած որոշումն «արժեք չունի» իրենց համար և ԵՄ-ին սպառնաց *Trexit*-ով. «Թուրքիայում քննարկվում է ԵՄ-ին միանալու հարցով հանրաքվե անցկացնելու տարբերակը: Հետագայում, եթե պետք լինի, Թուրքիան իր ժողովրդի կարծիքը կհարցնի՝

ինչպես Մեծ Բրիտանիան գնաց հանրաքվեի: Թուրքիան կարող է ԵՄ-ի փոխարեն անդամակցել ՇՀԿ-ին: Այդ հարցը քննարկվել է Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների հետ: Թուրքիան չի անցկացնում հարաբերությունների վերագնահատում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ»: Հարկ է նշել, որ ՇՀԿ-ն, որի անդամներն են Ռուսաստանն ու Չինաստանը, չի կարող Թուրքիայի համար այլընտրանք լինել ԵՄ-ին, քանի որ անդամակցության դեպքում նա չի կարողանա ծանրակշիռ դեր ունենալ ՇՀԿ-ում: Մինչդեռ ԵՄ-ին անդամակցելու դեպքում Թուրքիան կդառնա տարածքային առումով թիվ 1, բնակչության առումով ներկայումս թիվ 2 (Գերմանիայից հետո), ապագայում՝ դարձյալ թիվ 1 երկիրը (Թուրքիայում բնակչության աճի տեմպերն ավելի բարձր են), ինչը նշանակում է, որ Թուրքիան մոտ 100 ներկայացուցիչ կունենա 751 հոգանոց Եվրախորհրդարանում և մեծ ազդեցություն կունենա ԵՄ-ում որոշումների ընդունման վրա: Բացի այդ, Թուրքիայի իշխանությունները խորամանկության են դիմում՝ մահապատիժը վերականգնելու իրենց խորին ցանկությունը և ԵՄ-ից իրենց խորին հիասթափվածությունը (այդ խնդիրների շուրջ հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը) ներկայացնելով որպես ժողովրդի հիասթափություն և սեփական ձգտումները քողարկելով ժողովրդի անվան տակ:

Իսրայել. Նոյեմբերին Անկարայում Իսրայելի դեսպանի պաշտոնին նշանակվեց Էյթան Նաեհը, որը 1990-ականներին աշխատել է Թուրքիայում Իսրայելի դեսպանատանը: Թել Ավիվում Թուրքիայի դեսպան նշանակվեց նախկին վարչապետ Ահմեթ Դավութօղլուի՝ արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Քեմալ Օքեմը: Դեսպանների նշանակումը տեղի ունեցավ Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների վատթարացումից 6.5 տարի հետո:

Դեսպանների նշանակումից օրեր անց Էրդողանը 2014թ. Գազայում Իսրայելի գործողությունները հավասարեցրեց նացիստական գազանություններին հետ. «Ես համաձայն չեմ նրա հետ, ինչ արել է Հիտլերը, և համաձայն չեմ նրա հետ, ինչ Գազայի հատվածում արել է Իսրայելը: Անիմաստ է հարցնելը և համեմատելը, թե որն էր ավելի բարբարոսական: Իսրայելը հազարավոր մարդկանց է սպանել Գազայում ու Պաղեստինում»: Էրդողանը կրկնել է 2009թ. Դավոսում Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին ուղղած խոսքերը. «Դուք շատ

լավ գիտեք, թե ինչպես սպանեք»: Էրդողանի խոսքերով՝ ՀԱՄԱՍ-ը ոչ թե ահաբեկչական կազմակերպություն է, այլ ազգային զարթոնքից ծնված քաղաքական շարժում:

Էրդողանի այդ հայտարարությունը չխանգարեց, որ Իսրայելն ընդունի Թուրքիայի օգնության առաջարկը և վարչապետ Բենիամին Նեթանյահուի մակարդակով շնորհակալություն հայտնի նրան՝ կապված երկրում ծագած անտառային հրդեհների մարման համար Թուրքիայից հրշեջ ինքնաթիռների ուղարկման հետ: Նոյեմբերին Թուրքիայի ԱԳՆ-ն դատապարտեց Արևելյան Երուսաղեմում 181 տուն կառուցելու Իսրայելի իշխանությունների որոշումը: Թուրքիայի Կրոնական հարցերով վարչության ղեկավար Մեհմեթ Գյորմեզը դատապարտեց Իսրայելում ներկայացված նոր օրինագիծը, որն առնչվում է բարձրախոսներով ազան (մահմեդականների աղոթքի հրավեր) հնչեցնելն արգելելը. «Այդ փաստաթուղթն իսլամը և Երուսաղեմում մուսուլմանների ներկայությունը հերքելու փորձ է»: Այս ամենը վկայում է, որ մուսուլմանների իրավունքների ինքնահռչակ պաշտպան Թուրքիան պարզապես «դատապարտված» է հետագայում շարունակ քննադատել Իսրայելին՝ կապված մուսուլմաններին առնչվող նրա այս կամ այն գործողության հետ, ինչը որոշակի լարվածություն կապահովի թուրք-իսրայելական հարաբերություններում:

Ադրբեջան, Վրաստան. Նոյեմբերին Էրդողանը Ստամբուլի Ֆինանսական կոնգրեսի ժամանակ հայտարարեց, որ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղին շահագործման կհանձնվի մինչև տարեվերջ: Կարսի նահանգապետ Ռահմի Դողանը հայտարարեց, որ ԲԹԿ թուրքական հատվածով առաջին փորձնական գնացքը կանցնի 2017թ. հունվարի 1-ին: Նրա խոսքերով՝ ԲԹԿ շահագործումը կհեշտացնի տեղական արտադրանքի արտահանումը, ինչպես նաև Չինաստանն այդ երկաթուղով կկարողանա իր արտադրանքը 15 օրում արտահանել Եվրոպա, ինչը ծովային ճանապարհով տևում է 1.5-2 ամիս:

Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Բերաթ Ալբայրաքը հայտարարեց, որ մինչև 2016թ. ավարտը ծրագրված է 55%-ով ավարտել *TANAP* գազատարի կառուցումը. «Թուրքիան վստահորեն շարժվում է էներգետիկ հանգույց ստեղծելու ուղղությամբ և հաջողությամբ իրականացնում է էներգաաղբյուրների դիվերսիֆիկացում: *TANAP* ու «Թուրքական հոսք» գազատարները կօգնեն Թուրքիային վերածվել գազի առևտրի կենտրոնի»:

Եվրահանձնաժողովը Թուրքիայի մասին վերոնշյալ զեկույցում նշեց, որ Թուրքիան ապրիլյան պատերազմի ժամանակ անթաքույց աջակցել է Ադրբեջանին և չի վավերացրել 2009թ. ցյուրիխյան արձանագրությունները: Զեկույցն անդրադարձել էր նաև Ստամբուլում «Ակօս» հայկական թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության փաստով քրեական գործի ձգձգմանն ու Կարսում հակահայկական քարոզչությանը:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

Նշումների համար

Նշումների համար

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.12.2016թ.
Թիվ 10 (79), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում